



«ԱՐՄԵՆԻԱ ԻՆՇՈՒՐԱՆՍ» ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ
ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՄԲ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ

Հ Ա Ս Տ Ա Տ Վ Ա Ծ Է
«ԱՐՄԵՆԻԱ ԻՆՇՈՒՐԱՆՍ» ԱՍՊԸ խորհրդի
29.12.2017 թ. թիվ 107 ՈՐՈՇՄԱՄԲ

ԿԱՆՈՆՆԵՐ
ԲԱՆԿԱՅԻՆ ՔԱՐՏԻ ՔԱՐՏԱՊԱՆԻ ԱԶԱԿՑՈՒԹՅԱՆ ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅԱՆ

I. ԲԱԺԻՆ. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1.1 Բանկային քարտի քարտապանի աջակցության ապահովագրության սույն կանոնները (այսուհետև՝ Կանոններ), մշակված են Հայաստանի Հանրապետության Օրենսդրության, մասնավորապես՝ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի, «Ապահովագրության և ապահովագրական գործունեության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի և այլ իրավական ակտերի համաձայն:

1.2 Աջակցության ապահովագրությունը ներառվում է «Ապահովագրության և ապահովագրական գործունեության մասին» ՀՀ օրենքի ոչ կյանքի ապահովագրության տեսակի «Աջակցության ապահովագրություն» դասի մեջ:

Ճանապարհորդության մեջ գտնվող անձանց ուղեբեռի ապահովագրությունը ներառվում է «Ապահովագրության և ապահովագրական գործունեության մասին» ՀՀ օրենքի ոչ կյանքի ապահովագրության տեսակի «Փոխադրվող գույքի (բեռների) ապահովագրություն» դասի մեջ:

Ճանապարհորդության մեջ գտնվող ֆիզիկական անձանց կողմից երրորդ անձանց պատճառված վնասների քաղաքացիական պատասխանատվության ապահովագրությունը ներառվում է «Ապահովագրության և ապահովագրական գործունեության մասին» ՀՀ օրենքի ոչ կյանքի ապահովագրության տեսակի «Ընդհանուր պատասխանատվության ապահովագրություն» դասի մեջ:

Ուղևորության ընդհատումից ապահովագրությունը ներառվում է «Ապահովագրության և ապահովագրական գործունեության մասին» ՀՀ օրենքի ոչ կյանքի ապահովագրության տեսակի «Ֆինանսական վնասների ապահովագրություն» դասի մեջ:

1.3 «ԱՐՄԵՆԻԱ ԻՆՇՈՒՐԱՆՍ» Ապահովագրական սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունը, այսուհետ՝ Ապահովագրող, գործելով իր Կանոնադրությամբ, գործունակ ֆիզիկական և իրավաբանական անձանց հետ կնքում է մշտական բնակության երկրների և այն երկրների, որոնց քաղաքացի է համարվում Ապահովագրված անձը, սահմաններից դուրս գտնվելու ընթացքում (ապահովագրության տարածք) բժշկական, բժշկա-տրանսպորտային, ուղեբեռի, Ճանապարհորդության մեջ գտնվող ֆիզիկական անձանց կողմից երրորդ անձանց պատճառված վնասների քաղաքացիական պատասխանատվության, Ուղևորության ընդհատումից և Կանոններով նախատեսված քաղաքացիների այլ ծախսերի ապահովագրության պայմանագրեր՝

տալով նրանց համապատասխան Ապահովագրության վկայագիր կամ Ապահովագրության պայմանագիր (այսուհետ՝ Պայմանագիր):

1.4 Կանոնները հանդիսանում են ճամփորդության մեկնող անձանց բժշկական, բժշկա-տրանսպորտային, քաղաքացիական պատասխանատվության, ուղևորության ընդհատման և Կանոններով նախատեսված այլ ծախսերի ապահովագրության պայմանագրի անքակտելի մասը:

1.5 Պայմանագրում կողմերի համաձայնությամբ այլ պայմաններ ներառվելու դեպքում, այդ պայմանները չպետք է հակասեն Կանոններին, ՀՀ օրենսդրությանը և այլ իրավական ակտերին: Պայմանագրի և Կանոնների միջև անհամապատասխանությունների դեպքում գերակա է Պայմանագիրը:

1.6 Պայմանագրով Ապահովադիրներ են հանդիսանում Ապահովագրողի հետ Պայմանագիր կնքած իրավաբանական և գործունակ ֆիզիկական անձինք:

1.7 Անձը, ում օգտին կնքված է Պայմանագիրը, հանդիսանում է Ապահովագրված անձ:

Այն դեպքում, երբ Պայմանագիրն Ապահովադրի կողմից կնքված է իր իսկ օգտին, ապա նրա վրա տարածվում են Ապահովագրված անձի համար Կանոններով նախատեսված բոլոր իրավունքներն ու պարտականությունները: Կանոնների համաձայն Ապահովագրված անձ կարող են հանդիսանալ միայն ֆիզիկական անձինք:

1.8 Ապահովագրված անձ կարող են համարվել մինչև 70 տարեկան Հայաստանի Հանրապետության քաղաքացիները, օտարերկրյա քաղաքացիները, քաղաքացիություն չունեցող անձինք:

1.9 70 տարեկան, բայց 85-ից ոչ ավել տարիք ունեցող անձիք կարող են համարվել ապահովագրված անձ, հետևյալ պայմանի դեպքում՝

1.9.1. Հատուցվում է միայն Ապահովագրված անձի աճյունի տեղափոխման հետ կապված ծախսերը:

1.10 Կանոնների հիման վրա կնքված Պայմանագրով Ապահովագրողը պարտավորվում է Պայմանագրում նշված պատահարի (ապահովագրական դեպքի) տեղի ունենալու դեպքում, ապահովագրավճարի դիմաց և Պայմանագրով սահմանված ապահովագրական գումարի սահմաններում, իր ներկայացուցչի (սերվիսային (սպասարկող) ընկերության) միջոցով հատուցել Ապահովագրված անձին՝ Կանոնների 9-րդ կետում նշված պատահարների հետևանքով ապահովագրված անձին պատճառված վնասների առնչությամբ նրա կողմից կատարված բժշկական, բժշկա-տրանսպորտային և ապահովագրության պայմանագրով սահմանված մատուցված այլ ծառայությունների համար:

1.11 Այն դեպքում, երբ ապահովագրված անձն ինքնուրույն է վճարել բժշկական, բժշկա-տրանսպորտային և այլ ծառայությունների համար, ապա Ապահովագրողը, Կանոնների պայմանների պահպանման դեպքում, կհատուցի Ապահովագրված անձի կատարված ծախսերը Ապահովադրի (նրա կողմից լիազորված անձի) կողմից գրավոր դիմումի և բնօրինակ փաստաթղթերի հիման վրա:

2. ԱՊԱՀՈՎԱԳՐԱՎՃԱՐ, ԴՐԱ ՎՃԱՐՄԱՆ ԿԱՐԳԸ, ԱՊԱՀՈՎԱԳՐԱՎՃԱՐ ԶՎՃԱՐԵԼՈՒ ՀԵՏԵՎԱՆՔՆԵՐԸ

2.1 Ապահովագրավճար է համարվում ապահովագրության համար նախատեսված վճարը, որն Ապահովադիրը պարտավոր է մուծել Ապահովագրողին կամ նրա կողմից լիազորված անձին Պայմանագրի կնքման ժամանակ, բայց ոչ ուշ քան Պայմանագրի գործողության ժամկետի սկիզբը, եթե Պայմանագրով այլ բան նախատեսված չէ:

2.2 Ապահովագրավճարն Ապահովադրի կողմից վճարվում է միանվագ և ամբողջությամբ ապահովագրության ամբողջ ժամկետի համար:

2.3 Ապահովագրավճարը կարող է վճարվել կանխիկ կերպով Ապահովագրողի դրամարկղ կամ նրա լիազորված ներկայացուցչին, անկանխիկ հաշվարկների ձևով ՀՀ դրամով՝ վճարման օրը ՀՀ կենտրոնական բանկի կողմից սահմանված արտարժույթի փոխարժեքի հաշվարկային կուրսին համապատասխան:

2.4 Ապահովագրավճարի վճարման օր է համարվում՝

2.4.1 կանխիկ հաշվարկների դեպքում՝ Ապահովագրողի լիազոր ներկայացուցչին, կամ Ապահովագրողի դրամարկղ գումարի մուծման օրը,

2.4.2 անկանխիկ հաշվարկների դեպքում՝ Ապահովագրողի լիազոր ներկայացուցչի հաշվարկային հաշվին գումարի փոխանցման կամ Ապահովագրողի հաշվարկային հաշվին գումարի փոխանցման օրը:

2.5 Եթե Ապահովադիրը Պայմանագրով սահմանված կարգով և ժամկետում չի վճարել ապահովագրավճարը, ապա Ապահովագրողն իրավունք ունի ապահովագրավճարի վճարման համար սահմանված ժամկետից երեք օր (լրացուցիչ ժամկետ) հետո միակողմանի լուծելու Պայմանագիրը՝ առանց այդ մասին Ապահովադիրին ծանուցելու:

3. ՊԱՅՄԱՆԱԳԻՐ, ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳՈՐԾՈՂՈՒԹՅԱՆ ՏԱՐԱԾՔԸ ԵՎ ԳՈՐԾՈՂՈՒԹՅԱՆ ԺԱՄԿԵՏԸ

3.1 Պայմանագիրն Ապահովագրողի և Ապահովադրի (այսուհետև՝ կողմեր) միջև կնքվող գրավոր համաձայնագիր է, ըստ որի Ապահովագրողը պարտավորվում է ապահովագրական պատահարի առաջացման դեպքում իրականացնել ապահովագրական հատուցում այն անձին, ում օգտին կնքվել է Պայմանագիրը, իսկ Ապահովադիրը պարտավորվում է Պայմանագրում սահմանված ժամկետներում վճարել ապահովագրավճար:

3.2 Պայմանագիրը գործում է Պայմանագրում ըստ իրենց զոնավորման (Հավելված 1) նշված երկրներում, բացառությամբ Ապահովագրված անձի մշտական ապրելավայր հանդիսացող երկրների և այն երկրների, որոնց քաղաքացին է համարվում Ապահովագրված անձը: Պայմանագրում նշված "Չոնա" նշման և Ապահովագրության տարածքի տարրնթերցման դեպքում հիմնավոր գերակա է համարվում "Չոնայի" նշումը:

3.3 Պայմանագրի գործողության տարածքից բացառվում են նաև՝

- պետությունները, որոնց տարածքում տեղի են ունենում ռազմական գործողություններ կամ անցկացվում են ռազմական հակահարձակման միջոցառումներ.
- պետությունները, որոնց նկատմամբ կիրառվում են ՄԱԿ-ի տնտեսական և (կամ) ռազմական պատժամիջոցներ.
- տարածքներ, որտեղ հայտնաբերված են համաճարակի օջախներ.
- պետությունների տարածքներ, որտեղ այցելությունը ակնհայտորեն կարող է վնաս հասցնել մարդկանց առողջությանը:

3.4 Պայմանագրի գործողության ժամկետը Կանոնների 2-րդ կետում սահմանված դեպքերի պահպանմամբ հաշվարկվում է Երևանյան ժամանակով և սկսվում է ոչ շուտ, քան Պայմանագրում (ապահովագրության վկայագրում), որպես ապահովագրության ժամկետի սկիզբ նշված ամսաթվի 00:00 ժամը, և ավարտվում է ոչ ուշ, քան Պայմանագրում (ապահովագրության վկայագրում) որպես ապահովագրության ժամկետի ավարտ նշված ամսաթվի 24:00 ժամը:

3.5 30 օր և ավել ժամկետով Պայմանագրի կնքման դեպքում Ապահովագրողը պատասխանատվություն է կրում միայն այնքան օրերի համար, որոնք նշված են Պայմանագրի "օրերի քանակ" սյունակում: Յուրաքանչյուր ապահովագրության տարածք մեկնելու դեպքում Պայմանագրի "օրերի քանակ" սյունակում նշված ապահովագրության ժամկետը ինքնաշխատ կերպով փոքրանում է ապահովագրության տարածքում անցկացրած ժամկետի օրերի քանակով: Ընդ որում Ապահովագրողի պատասխանատվությունը դադարում է "օրերի քանակ" սյունակում սահմանված ժամկետի ավարտմամբ:

3.6 Պայմանագրի գործողության նվազագույն ժամկետ է 3 օրը, առավելագույնը՝ 1 տարին, եթե Պայմանագրով այլ բան նախատեսված չէ:

4. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐՆ ՈՒ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԵՐԸ

4.1 **Ապահովադիրն (Ապահովագրված անձն) իրավունք ունի՝**

4.1.1 ցանկացած ժամանակ հրաժարվել Պայմանագրից, եթե հրաժարման պահին ապահովագրական պատահար տեղի ունենալուց բացի այլ հանգամանքներով պայմանավորված ապահովագրական դեպքի տեղի ունենալու հավանականությունը չի վերացվել,

4.1.2 Պայմանագրի կորստի դեպքում ստանալ դրա կրկնօրինակը,

4.1.3 Ապահովագրողից ստանալ Կանոնների և ապահովագրական հատուցման վճարման կարգի մասին պարզաբանումներ,

4.1.4 անձամբ կամ ներկայացուցչի միջոցով դիմել Ապահովագրողին (այս դեպքում ճիշտ ձևակերպված և հաստատված լիազորագրի կամ իրավունքը հաստատող այլ փաստաթղթի առկայությունը պարտադիր է) Կանոններով նախատեսված և Պայմանագրում նշված ապահովագրության տարածքում գտնվելու ժամանակ Կանոններով նախատեսված ապահովագրական ծառայության ծախսերի ձևով կատարված դրամական միջոցների հատուցման համար:

4.2 Ապահովագրողն իրավունք ունի՝

4.2.1 ստուգել Պայմանագրի կնքման կամ ապահովագրական պատահարին առնչվող Ապահովագրի (Ապահովագրված անձի) կողմից հայտնած տեղեկատվությունը,

4.2.2 ստուգել Ապահովագրի (Ապահովագրված անձի) կողմից Պայմանագրի պահանջների և պայմանների կատարումը,

4.2.3 Ապահովագրի (Ապահովագրված անձի) կողմից Պայմանագրի պայմանների չկատարման դեպքում լուծել Պայմանագիրը՝ վերջինիս տեղյակ պահելով Պայմանագրի լուծման պատճառների մասին, ընդ որում Ապահովագրի կողմից վճարված ապահովագրավճարը վերադարձման ենթակա չէ,

4.2.4 նախքան Ապահովագրված անձին (նրա օրինական ներկայացուցչին) ապահովագրական հատուցում վճարելու մասին որոշման ընդունումը Ապահովագրված անձից (և/կամ բժշկական հաստատությունից, բժշկից, Ասսիսթանս կազմակերպությունից) ստանալ բոլոր անհրաժեշտ փաստաթղթերը և օգնություն ցույց տալու անհետաձգելիության և այդ տեսակ օգնության ցուցաբերման միանշանակության ապացույցը,

4.2.5 մերժել ապահովագրական հատուցման վճարումը, եթե Պայմանագրի կնքման պահին Ապահովագիրը (Ապահովագրված անձը) նախօրոք հայտնել է աղավաղված տեղեկություններ Ապահովագրված անձի մասին, ներկայացրել է սխալ կամ աղավաղված, կեղծ ապացույցներ ապահովագրական դեպքի տեղի ունենալու մասին, Ապահովագրողի քննարկմանն է ներկայացրել Կանոնների 14.2 կետին և(կամ) Հայաստանի Հանրապետության և(կամ) ժամանակավոր գտնվելու երկրի օրենսդրության պահանջներին հակասող և չհամապատասխանող փաստաթղթեր,

4.2.6 մերժել ապահովագրական հատուցման վճարումը Կանոնների 5.3.4, 5.3.5, 5.4.2, 5.4.3, 5.4.4 և 12-րդ կետերում նախատեսված հիմքերով:

4.3 Ապահովագրի պարտավոր է՝

4.3.1 վճարել ապահովագրավճարը Կանոնների 2.1-2.4 կետերում նշված ժամկետներում և կարգով,

4.3.2 Ապահովագրողին հայտնել ապահովագրական ռիսկի գնահատման համար նշանակություն ունեցող հավաստի տեղեկատվություն,

4.3.3 ապահովել Պայմանագրով նախատեսված փաստաթղթերի ապահովությունը,

4.3.4 ապահովագրական պատահարի մասին հայտնի դառնալուց անմիջապես հետո, անհապաղ, հեռախոսով կամ տեղեկացման փաստը հավաստող այլ ճանապարհով հայտնել սերվիսային ընկերությանը (եթե դա Ապահովագրված անձը չի կատարել) կամ Ապահովագրողին Պայմանագրում (ապահովագրության վկայագրում) նշված հեռախոսահամարներով՝ սերվիսային Ընկերության (Ապահովագրողի) հետ Ապահովագրված անձի բժշկական և (կամ) բժշկատրանսպորտային օգնությունը և դրա հետ կապված ծախսերը համաձայնեցնելու նպատակով: Սույն դրույթի չկատարումը հանգեցնում է Կանոնների 12.1.2 կետով նախատեսված հետևանքների առաջանալուն:

4.3.5 Ապահովագրական պատահարի մասին ոչ ուշ, քան ապահովագրված անձի արտասահմանյան ուղևորությունից վերադառնալուց հետո 10 աշխատանքային օրյա ժամկետում այդ մասին գրավոր տեղեկացնել Ապահովագրողին, եթե դա Ապահովագրված անձը չի կատարել:

4.4 Ապահովագրված անձը պարտավոր է՝

4.4.1 ապահովել ապահովագրական փաստաթղթերի և ապահովագրական դեպքի հետ կապված փաստաթղթերի ապահովությունը,

4.4.2 ապահովագրական դեպքի տեղի ունենալու ժամանակ անձամբ (կամ ներկայացուցչի միջոցով) անհապաղ Պայմանագրում նշված հեռախոսահամարներով կամ ցանկացած մատչելի եղանակով, որը թույլ կտա

հաղորդման փաստը օբյեկտիվորեն արձանագրել, տեղեկացնել կատարվածի մասին սերվիսային (սպասարկող) ընկերությանը կամ Ապահովագրողին՝ սերվիսային Ընկերության (Ապահովագրողի) հետ Ապահովագրված անձի բժշկական և (կամ) բժշկա-տրանսպորտային օգնությունը և դրա հետ կապված ծախսերը համաձայնեցնելու նպատակով: Սույն դրույթի չկատարումը հանգեցնում է Կանոնների 12.1.2 կետով նախատեսված հետևանքների առաջանալուն,

4.4.3 Ապահովագրական պատահարի մասին ոչ ուշ, քան արտասահմանյան ուղևորությունից վերադառնալուց հետո 10 աշխատանքային օրյա ժամկետում այդ մասին գրավոր տեղեկացնել Ապահովագրողին, եթե դա Ապահովադիրը չի կատարել:

4.4.4 բժշկական և (կամ) բժշկա-տրանսպորտային օգնության ցուցաբերման և կազմակերպման ընթացքում կատարել սերվիսային (սպասարկող) ընկերության (Ապահովագրողի) խորհուրդները և ցուցումները,

4.4.5 հետևել բժշկական օգնության ցուցաբերման ընթացքում տրված բժշկի նշանակումներին և բժշկական հաստատության կողմից սահմանված կանոնակարգին,

4.4.6 եթե Պայմանագրի գործողության ժամկետը գերազանցում է ապահովագրված օրերի քանակը, ապա Ապահովագրված անձը պարտավոր է փաստաթղթերով (համապատասխան սահմանապահ վերահսկողության ծառայության կողմից Հայաստանի Հանրապետության Պետական սահմանը անցնելու վերաբերյալ համապատասխան նշումներով արտասահմանյան անձնագրի ներկայացման միջոցով) ապացուցել Ապահովագրողին, որ բժշկական և (կամ) բժշկա-տրանսպորտային օգնություն ստանալու համար դիմելու պահին ապահովագրության ժամկետը լրացած չի եղել:

4.5 Ապահովագրողը պարտավոր է՝

4.5.1 ծանոթացնել Ապահովադիրին ապահովագրության Կանոնների դրույթներին,

4.5.2 ապահովագրավճարի մուծման դեպքում, Ապահովադիրին (Ապահովագրված անձին) տրամադրել Պայմանագիր (ապահովագրության վկայագիր)՝ կից Կանոններով, որոնց հիման վրա կնքված է Պայմանագիրը:

4.5.3 ապահովագրական պատահար տեղի ունենալու դեպքում ապահովագրական դեպքին և վնասի հաշվարկին վերաբերող բոլոր անհրաժեշտ փաստաթղթերը ստանալուց հետո 15 օրվա ընթացքում վճարել ապահովագրական հատուցում կամ հնգօրյա ժամկետում մերժել այն,

4.5.4 Ապահովադրի (Ապահովագրված անձի) հետ հարաբերություններում ապահովվել գաղտնիությունը:

5. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ՎԱՂԱԺԱՄՎԵՏ ԼՈՒԾՈՒՄԸ

5.1 Պայմանագիրը վաղաժամկետ լուծվում է մինչև ապահովագրության ժամկետի ավարտը Ապահովագրողի կողմից ապահովագրական հատուցումը Պայմանագրով սահմանված ապահովագրական գումարի ամբողջ չափով վճարելու պարտավորության կատարման դեպքում:

5.2 Պայմանագրի գործողությունը դադարում է՝

5.2.1 Կողմերի համաձայնությամբ,

5.2.2. ՀՀ օրենսդրությամբ նախատեսված այլ դեպքերում:

5.3 Ապահովադրի (Ապահովագրված անձի) կողմից ապահովագրության ժամկետի գործողության մեջ մտնելուց հետո Պայմանագրից գրավոր հրաժարվելու դեպքում Ապահովագրողին վճարված ապահովագրավճարները վերադարձման ենթակա չեն:

5.4 Ապահովադրի (Ապահովագրված անձի) կողմից մինչև ապահովագրության ժամկետի գործողության մեջ մտնելը Պայմանագրից գրավոր հրաժարվելու դեպքում Ապահովագրողին վճարված ապահովագրավճարները ենթակա են վերադարձման վճարված ապահովագրավճարի 85 %-ի չափով:

Ապահովադրի ցանկությամբ Պայմանագրի դադարեցման դեպքում Ապահովադիրը (Ապահովագրված անձը) պարտավոր է Ապահովագրողին վերադարձնել Պայմանագրի բնօրինակը և երկրորդ օրինակը, հակառակ դեպքում Ապահովագրողին վճարված ապահովագրավճարները վերադարձման ենթակա չեն:

5.5 Պայմանագրի գործողության ընթացքում երրորդ անձանց կողմից Ապահովադրի (Ապահովագրված անձի) նկատմամբ ցանկացած անօրինական գործողության, այդ թվում՝ խարդախության կամ խարդախության փորձի, վերջինիս Ուղևորության վերաբերյալ խեղաթյուրված, ոչ ճիշտ և (կամ) լիարժեք, ցանկացած տեսակի սխալ

տեղեկատվության ներկայացման դեպքում Պայմանագիրն Ապահովագրողի կողմից ճանաչվում է առոչինչ, և այդ Պայմանագրով Ապահովագրողին վճարված ապահովագրավճարներն ամբողջությամբ ենթակա են վերադարձման: Իսկ Պայմանագրի գործողության ժամկետի ավարտից հետո հայտնաբերված համանման դեպքերում՝ Պայմանագրի գծով Ապահովագրողին ներկայացված ապահովագրական հատուցում ստանալու վերաբերյալ դիմումը ենթակա է մերժման և Ապահովագրողն ազատվում է ապահովագրական հատուցում տրամադրելու պարտականությունից, իսկ Ապահովագրողին վճարված ապահովագրավճարները վերադարձման ենթակա չեն:

II. ԲԱԺԻՆ. ԱՐՏԱՍԱՀՄԱՆՑԱՆ ՈՒՂԵՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԸՆԹԱՑՔՈՒՄ ՔԱՂԱՔԱՑԻՆԵՐԻ ԲԺՇԿԱԿԱՆ ԵՎ/ԿԱՍ ԲԺՇԿԱՍՐԱՆՍՊՈՐՏԱՑԻՆ ԾԱԽՍԵՐԻ ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅՈՒՆ

6. ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅԱՆ ՍՈՒԲՅԵԿՏՆԵՐԸ

6.1 “ԱՐՄԵՆԻԱ ԻՆՇՈՒՐԱՆՍ” Ապահովագրական սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունը, այսուհետ՝ Ապահովագրող, գործելով իր Կանոնադրությամբ, գործունակ ֆիզիկական և իրավաբանական անձանց հետ կնքում է մշտական բնակության երկրների և այն երկրների, որոնց քաղաքացին է համարվում Ապահովագրված անձը, սահմաններից դուրս գտնվելու ընթացքում (ապահովագրության տարածք) բժշկական, բժշկա-տրանսպորտային և Կանոններով նախատեսված քաղաքացիների այլ ծախսերի ապահովագրության պայմանագրեր՝ տալով նրանց համապատասխան Պայմանագիր:

6.2 Պայմանագրով Ապահովադիրներ են հանդիսանում Ապահովագրողի հետ Պայմանագիր կնքած իրավաբանական և գործունակ ֆիզիկական անձինք:

6.3 Անձը, ում օգտին կնքված է Պայմանագիրը, հանդիսանում է Ապահովագրված անձ: Այն դեպքում, երբ Պայմանագիրն Ապահովադրի կողմից կնքված է իր իսկ օգտին, ապա նրա վրա տարածվում են Ապահովագրված անձի համար Կանոններով նախատեսված բոլոր իրավունքներն ու պարտականությունները: Կանոնների համաձայն Ապահովագրված անձ կարող են հանդիսանալ միայն ֆիզիկական անձինք:

6.4 Ապահովագրված անձ կարող են համարվել մինչև 70 տարեկան Հայաստանի Հանրապետության քաղաքացիները, օտարերկրյա քաղաքացիները, քաղաքացիություն չունեցող անձինք:

6.5 70 տարեկան, բայց 85-ից ոչ ավել տարիք ունեցող անձիք կարող են համարվել ապահովագրված անձ, հետևյալ պայմանի դեպքում՝

6.5.1 Հատուցվում է միայն Կանոնների 10.2.4 կետով նախատեսված Ապահովագրված անձի աճյունի տեղափոխման հետ կապված ծախսերը:

7. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿՆՔՄԱՆ ԿԱՐԳԸ

7.1 Պայմանագրի կնքման համար հիմք է հանդիսանում Ապահովադրի հայտարարությունը (գրավոր կամ բանավոր), որում վերջինս հայտնում է Պայմանագրի կնքման և ապահովագրական ռիսկի գնահատմանն առնչվող անհրաժեշտ տվյալներ:

7.2 Պայմանագրի կնքման փաստը հաստատվում է Պայմանագրի տրամադրմամբ, որին որպես անբաժանելի մաս կցված են Կանոնները:

8. ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅԱՆ ՕԲՅԵԿՏ

8.1 Կանոններով ապահովագրության օբյեկտ են հանդիսանում Ապահովագրված անձի գույքային շահերը (ծախսերը)՝ կապված Պայմանագրի գործողության ընթացքում Կանոններով նախատեսված և Պայմանագրում նշված ապահովագրության տարածքում գտնվելու ընթացքում ապահովագրական պատահարի տեղի ունենալու հետևանքով անհետաձգելի բժշկական և բժշկա-տրանսպորտային օգնության ստացման հետ:

9. ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ՊԱՏԱՀԱՐ, ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ՌԻՍԿ

9.1 Ապահովագրական պատահարներ են համարվում Կանոններով (Պայմանագրով) նախատեսված պատահարները, որոնց հետևանքով առաջ է եկել Ապահովագրողի ապահովագրական հատուցում վճարելու պարտավորությունը:

9.2 Կանոններով ապահովագրական պատահարներ են համարվում Ապահովագրված անձի հետ փաստացի տեղի ունեցած՝

9.2.1 Հիվանդություն (առողջության հանկարծակի խանգարում և օրգանիզմի նորմալ կենսագործունեության խախտում, որոնք առաջացել են ներքին կամ արտաքին գրգռիչների հետևանքով և պահանջում են անհետաձգելի և միայն տվյալ տեսակի բժշկական օգնություն, ընդ որում տվյալ վատացումը պետք է լինի իր բնույթով ոչ քրոնիկ հիվանդության դրսևորում կամ քրոնիկ հիվանդության կյանքին վտանգ սպառնացող սրացում, ընդ որում նման գանգատներ առաջին անգամ պետք է ի հայտ եկած լինեն ապահովագրության ժամկետի ընթացքում և ապահովագրական տարածքում գտնվելու ժամանակ):

9.2.1 կետի բացառություններ՝

- ուղեղի արյան շրջանառության սուր խանգարում,
- սրտի կաթված, սրտի իշեմիկ հիվանդություն և դրա հետևանքներն ու սրացումները,
- կոմա

9.2.2 դժբախտ դեպքի հետևանքով առաջացած տրավմատիկ վնասվածքներ: Ընդ որում Կանոնների շրջանակներում դժբախտ դեպք է համարվում հանկարծակի, չակնկալվող, չկանխատեսված և արտաքին գործոնների ազդեցությամբ պատահարները, որոնք առաջացրել են տրավմատիկ վնասվածք կամ մահ, իսկ տրավմատիկ վնասվածք է համարվում դժբախտ դեպքի հետևանքով առաջացած մարդու մարմնի (մարմնի որևէ մասի) անատոմիական ամբողջության խախտումը և մարդու հյուսվածքների կառուցվածքի փոփոխությունը, որն ուղեկցվում է դրանց ֆունկցիաների խանգարմամբ:

9.2.3 սուր ատամնացավ, որն առաջացել է ատամի և (կամ) դրան շրջապատող հյուսվածքների սուր բորբոքումից կամ դժբախտ դեպքի հետևանքով ստացված ծնոտային վնասվածքից:

9.3 Կանոնների 9.2 կետում դիտարկված դեպքերը համարվում են ապահովագրական պատահարներ և հատուցման ենթակա են, եթե դրանք տեղի են ունեցել Ապահովագրված անձի հետ, Պայմանագրում և Կանոններում նշված ապահովագրության տարածքում գտնվելու ժամանակ և Պայմանագրի գործողության ընթացքում:

9.4 Ապահովագրական պատահարներ չեն համարվում Ապահովագրված անձի առողջական վիճակի վատացումը կամ մահը, և հատուցման ենթակա չեն դրանց հետ կապված ծախսերը (կամ հատուցման ենթակա են Կանոններում նշված սահմանաչափերով) այն դեպքերում, երբ Ապահովագրված անձի մոտ առկա են ներքոնշյալ հիվանդությունները, որոնք կարող են հանդիսանալ ուղղակի/անուղղակի պատճառ, ինչպես նաև ռիսկի և նպաստող գործոն վերոնշյալ վատացման և մահվան համար.

9.4.1 Ապահովագրված անձի մոտ մինչև ապահովագրության ժամկետի սկիզբը առկա հիվանդություն՝ անկախ վերջինիս վերաբերյալ որևէ բուժում ստանալու փաստից (բացառությամբ Կանոնների 11.4 կետով նախատեսված դրույթի), ինչպես նաև հիվանդություն, որի դեպքում ուղևորությունը հակացուցված է եղել Ապահովագրված անձին և (կամ) կարող էր խորացնել հիվանդության ընթացքը (պատճառ հանդիսանալ դրա սրացման համար),

9.4.2 Ապահովագրված անձի իրենց բնույթով քրոնիկ հիվանդությունների կամ նրանց սրացումներ, ինչպես նաև նախկինում տեղի ունեցած պաթոլոգիաների հետևանքով առաջացած վիճակները և/կամ բարդությունները՝ անկախ դրանց առաջին անգամ ի հայտ գալու ժամկետից և դրանց կապակցությամբ նախկինում բուժում ստանալու փաստից,

9.4.3 վնասված կամ սեռական ճանապարհով փոխանցվող հիվանդություններ,

9.4.4 հոգեկան հիվանդություններ, էպիլեպսիա (առաջնային և սիմպտոմիկ) և դրանց սրացումներ (անկախ այն բանից, Ապահովագրված անձը գիտեր դրանց մասին մինչև ճանապարհորդությունը, թե ոչ), պահվածքի

խանգարումներ, այդ թվում ակոհոլիզմի, թմրամոլության, ինչպես նաև դրանց հետ կապված տրավմատիկ վնասվածքներ,

9.4.5 ուռուցքային հիվանդություններ (բարորակ և չարորակ գոյացությունների հետ),

9.4.6 ուլտրամանուշակագույն ճառագայթների հետևանքով առաջացած արևահարումներ և մաշկային ծածկույթի սուր այլ փոփոխություններ, ինչպես նաև սնկային և դերմոտոլոգիական հիվանդություններ (բացառությամբ ինֆեկցիոն հիվանդությունների), այդ թվում ալերգիկ (բացառությամբ Կլիմկեյի այտուցի) և սննդային դերմատիտներ,

9.4.7 Պայմանագրում և Կանոններում նշված ապահովագրության տարածքում կանխամտածված նպատակային բուժում ստանալու դեպքեր,

9.4.8 Ապահովագրված անձի կողմից իրականացված դիտավորյալ հանցագործություն, ինքնասպանություն կամ մահափորձ, ապահովագրված անձի կողմից իրեն հասցված կանխամտածված մարմնական վնասվածքներ, ակոհոլիային խմիչքների կամ թմրադեղերի և տոքսիկ նյութերի կամ այլ նյութերի չթույլատրված օգտագործման և (կամ) դրանց օգտագործման (ակոհոլիային խմիչքների, թմրադեղերի, տոքսիկ նյութերի օգտագործման հետքերի առկայությունը կարող է արտացոլվել բժշկական եզրակացություններում և տվյալ պատահարին վերաբերող այլ փաստաթղթերում) հետևանքների (վատթարացման), ակոհոլիային, թմրադեղային կամ տոքսիկ նյութերով հարբեցության դեպքում տրանսպորտային միջոցի վարելու կամ տրանսպորտային միջոցը ակոհոլիային, թմրադեղային կամ տոքսիկ նյութերով հարբեցության մեջ գտնվող անձին վստահելը, կամ առանց համապատասխան վարորդական թույլտվության անձին տրանսպորտային միջոցը վստահելը, ինչպես նաև իրեն ենթարկելը չարդացված ռիսկի, բացառությամբ անհրաժեշտ ինքնապաշտպանության դեպքերի կամ եթե այն կապված է այլ անձի կյանքը փրկելու հետ,

9.4.9 Ապահովագրված անձի առողջական վիճակին հասցված վնասը (առողջական վիճակի վատացումը) կամ մահը, որը կապված է ձիարշավի, ավտոմեքենաների մրցակազմի, սպորտային մրցույթների, դահուկային սպորտով զբաղվելու, ավիասպորտի, պարաշյուտով թռիչքի, լեռնամագլցման և այլ վտանգավոր սպորտաձևերի հետ:

9.4.10 Ապահովագրված անձի առողջական վիճակին հասցված վնասը (առողջական վիճակի վատացումը) կամ մահը՝ կապված (հայտարարված կամ չհայտարարված) պատերազմական գործողությունների ցանկացած հետևանքների, ռազմական գործողությունների, մանևրային կամ ռազմական այլ միջոցառումների, քաղաքացիական պատերազմի, տարատեսակ ժողովրդական հուզումների և գործադուլների, ատոմային պայթյունի ուղղակի կամ անուղղակի ազդեցության, ռադիացիայի կամ ռադիոակտիվ վարակման:

9.4.11 Ապահովագրողը մերժում է ապահովագրական հատուցման վճարումը, եթե պատահարը տեղի է ունեցել ահաբեկչական գործողությունների արդյունքում կամ ահաբեկչական ակտերի հետևանքների պատճառով:

9.4.12 Ապահովագրողը մերժում է ապահովագրական հատուցման վճարումը, եթե պատահարը (Ապահովագրված անձին հասցված տրավմա, հիվանդություն, մահ) տեղի է ունեցել երրորդ անձանց գործողությունների հետևանքով:

10. ԱՊԱՀՈՎԱԳՐՈՂԻ ԿՈՂՄԻՑ ՉՍՏՈՑՎՈՂ ԾԱԽՍԵՐ

Ապահովագրական պատահար տեղի ունենալու և Կանոնների 5.4.2. (5.3.4) կետերի համաձայն Ապահովագրված անձի (Ապահովադրի) կողմից դրա մասին տեղեկացնելու վերաբերյալ պահանջները կատարելու դեպքում Ապահովագրողը Ասիսթանս կազմակերպության միջոցով պարտավորվում է կազմակերպել բժշկական և բժշկա-տրանսպորտային օգնության տրամադրում և իրականացնել ապահովագրական հատուցման վճարումը Ապահովագրված անձի այն ծախսերի համար, որոնք ապահովագրված անձը կատարել է կամ պետք է կատարի:

10.1 Բժշկական օգնության հետ կապված ծախսեր են՝

10.1.1 ծախսեր, որոնք անհրաժեշտ են եղել փրկելու, էվակուացիայի, ստացիոնար պայմաններում հոսպիտալացման համար հիվանդանոց տեղափոխելու ծախսեր, վիրաբուժության, ախտորոշման, դեղաբուժության, ինչպես նաև դրանց ամբուլատոր պայմաններում տրամադրման ծախսերը, ընդ որում

հիվանդասենյակում և վերակենդանացման բաժանմունքում գտնվելու ծախսերը ենթակա է հատուցման օրեկան առավելագույնը 500 (հինգ հարյուր) պ/մ չափով, առավելագույնը 10 (տաս) օրվա համար:

10.1.2 Ապահովագրված անձի կողմից սույն Կանոններում և Պայմանագրում նշված ապահովագրության տարածք բազմակի մեկնման դեպքում ապահովագրական հատուցումը տրվում է յուրաքանչյուր մեկնման սահմաններում Ապահովագրված անձի այդ տարածքում անընդմեջ գտնվելու 90 օրից ոչ ավել ժամկետի համար: Ընդ որում մեկնում է համարվում Հայաստանի Հանրապետության Պետական սահմանը մեկ անգամ անցնելը՝ ապահովագրության տարածք մուտք գործելու և (կամ) Հայաստանի Հանրապետության Պետական սահմանը մեկ անգամ անցնելը՝ Հայաստանի Հանրապետության տարածք մուտք գործելը:

Բազմակի ուղևորությունների պայմանը գործում է այն Պայմանագրի համար որտեղ Պայմանագրի գործողության ժամկետը համընկնում է ապահովագրված օրերի քանակի հետ, որը կնքվել է հատուկ սակագներով, Պայմանագրում արտացոլվում է հատուկ նշագրում:

10.1.3 դժբախտ դեպքի առաջացմամբ պայմանավորված ատամի կամ դրան շրջապատող հյուսվածքների սուր բորբոքման, ռենտգենային հետազոտության, ատամների հեռացման և պլումբման հետ կապված ծախսերը՝ Կանոնների 11.3 կետում նշված պատասխանատվության սահմաններում:

10.1.4 Արտակարգ իրավիճակներում բժշկական պատրաստուկների տրամադրման համար ծախսերը.

Եթե դա հնարավոր է և չի արգելվում տվյալ երկրի (վայրի) օրենքով, ապա Ապահովագրողը, տեղի բուժող բժշկի խնդրանքով ապահովում է Ապահովագրված անձին անհրաժեշտ դեղորայքային միջոցներով, որոնք հնարավոր չէ ձեռք բերել տեղում՝ Ապահովագրի կողմից տրանսպորտային ծախսերի հատուցման պայմանով:

10.2 Բժշկա-տրանսպորտային օգնության տրամադրման հետ կապված ծախսեր են՝

10.2.1 Ապահովագրական պատահարի առաջացման դեպքում առաջին բժշկական օգնության տրամադրման համար և այլ ստացիոնար բժշկական հաստատություն տեղափոխման ծախսեր:

Այն դեպքում, երբ Ապահովագրված անձի առողջական վիճակի սրացման դեպքում Ապահովագրողի կողմից նշանակված բժիշկը տեղի բուժող բժշկի հետ խորհրդակցելուց հետո որոշում է, որ իր մասնագիտական կարծիքով հիվանդին պետք է անհապաղ տեղափոխել այլ հիվանդանոց՝ բուժելու նպատակով, Ապահովագրողը կազմակերպում է տեղափոխումը այլ բուժ-հաստատություն (ստացիոնար), որտեղ հնարավոր է պատշաճ բժշկական հսկողության ներքո տրամադրել համապատասխան բուժում:

Այն դեպքում, երբ Ապահովագրված անձի առողջական վիճակը խոչընդոտում է ճանապարհորդությունը շարունակելուն և այն ժամանակ, երբ Ապահովագրողի կողմից նշանակված բժիշկը տեղի բժշկի հետ խորհրդակցելով որոշում է, որ համաձայն իր մասնագիտական կարծիքի հիվանդի վիճակը թույլատրում է իրականացնել տուժածի տեղափոխությունը մշտական բնակության վայր, Ապահովագրողը հնարավորինս կարճ ժամկետներում վճարում է տեղափոխության ծախսերը:

10.2.2 երրորդ անձանց համար տրամադրված տրանսպորտային ծառայության հատուցման վճարման հետ կապված ծախսերը:

Բժշկական անհրաժեշտության դեպքում, եթե միայնակ ճանապարհորդող Ապահովագրված անձը սույն Կանոններում և Պայմանագրում նշված ապահովագրության տարածքում հոսպիտալացվում է 7 (յոթ) օրից ավելի ժամանակահատվածով, Ապահովագրողը կարող է տրամադրել էկոնոմ կարգի երկկողմ ուղևորատոմս Ապահովագրված անձի կողմից մատնանշված անձին՝ հիվանդին այցելելու համար: Այդ անձի ապրելակերպի համար ծախսերը Ապահովագրված անձի հոսպիտալացման երկրում Ապահովագրողի կողմից չեն ծածկվում:

10.2.3 Ապահովագրված անձի խնամքի տակ գտնվող անձանց վերադարձի ծախսերը:

Եթե Ապահովագրված անձի հիվանդության կամ դժբախտ դեպքի հետևանքով վերջինիս խնամքի տակ գտնվող երեխաները գտնվում են Կանոններում և Պայմանագրում նշված ապահովագրության տարածքում առանց խնամքի, ապա Ապահովագրողը հատուցում է մշտական բնակության վայր իրենց վերադարձի ծախսերը էկոնոմ դասով: Համապատասխան պատրաստություն իրականացնելու համար այս դեպքում անհրաժեշտ է կապի մեջ մտնել սերվիսային ընկերության որևէ դիսպետչերային կենտրոնի հետ: Եթե անհրաժեշտ են ուղեկցողներ, իսկ ավիաընկերությունը չի տրամադրում դրանք, ապա ուղեկցողներին տրամադրում է Ապահովագրողը՝ հատուցելով միայն վերջիններիս էկոնոմ կարգի երկկողմ ուղևորատոմսի ծախսերը:

10.2.4 Ապահովագրված անձի աճյունի տեղափոխման հետ կապված ծախսերը:

Ապահովագրողը հնարավորինս սեղմ ժամկետներում կազմակերպում է հանգուցյալի աճյունի տեղափոխումը մշտական բնակության վայր, ընդ որում վերոնշյալ ծախսերը ենթակա են հատուցման մինչև 10 000 (տաս հազար) պ/մ չափով:

10.3 Իրավաբանական խորհրդատվության տրամադրման հետ կապված ծախսերը՝

10.3.1 Եթե դրա անհրաժեշտությունն առկա է, ապա մշտական բնակության վայր հանդիսացող երկրի տարածքից դուրս գտնվելու ժամանակահատվածում սերվիսային ծառայության դիսպեչերական կենտրոնները իրավաբանի խորհրդի կամ խորհրդատվության անհրաժեշտության, ինչպես նաև քրեական կամ քաղաքացիական գործերի ներկայացման կամ հետաքննության հետ կապված կարող են Ապահովագրված անձին օգնություն ցուցաբերել:

10.3.2 Տրամադրված իրավաբանական ծառայության հետ կապված բոլոր ծախսերը կրում է Ապահովագրողը՝ մեկ ապահովագրական պատահարի շրջանակներում՝ առավելագույնը 3000 (երեք հազար) պ/մ չափով:

11. ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ԳՈՒՄԱՐ, ԶՀԱՏՈՒՑՎՈՂ ԳՈՒՄԱՐ, ԱՊԱՀՈՎԱԳՐՈՂԻ ՊԱՏԱՄԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ ԼԻՄԻՏՆԵՐ (ՍԱՀՄԱՆԱԶՍՓԵՐ)

11.1 Կանոնների համաձայն բժշկական և բժշկա-տրանսպորտային ծախսերի համար ապահովագրական գումարը սահմանվում է կողմերի համաձայնությամբ և նշվում է Պայմանագրում:

11.2 Ապահովագրողն իրավունք ունի Պայմանագրում սահմանել յուրաքանչյուր ապահովագրական դեպքի հետևանքով պատճառված իրական վնասի չհատուցվող չափ՝ ոչ պայմանական չհատուցվող գումար (ֆրանշիզա): Ոչ պայմանական չհատուցվող գումարի կիրառման դեպքում Ապահովագրողը վճարում է ապահովագրական հատուցում՝ մասհանելով չհատուցվող գումարը:

11.3 Պայմանագրով Ապահովագրողի պատասխանատվության սահմանը ատամնաբուժական օգնություն ցուցաբերելու բժշկական ծախսերի գծով կարող է կազմել յուրաքանչյուր ատամի (բայց մեկ ապահովագրական պատահարի շրջանակներում երկու ատամից ոչ ավելի) համար մինչև 100 (մեկ հարյուր) պ/մ չափով:

11.4 Պայմանագրով 9.4 կետում նշված բոլոր ենթակետերի համար՝ Ապահովագրված անձի կյանքին վտանգ սպառնացող դեպքերում բժշկական օգնության տրամադրման հետ կապված Ապահովագրողի պատասխանատվության սահմանը կարող է կազմել ոչ ավել, քան 500 (հինգ հարյուր) պ/մ չափով:

11.5 Պայմանագրի 9.2.2 կետում նշված մեկ պատահարի հետևանքով տրավմատիկ վնասվածքների վիրաբուժական բուժումը ենթակա է հատուցման ոչ ավել քան 5 000 (հինգ հազար) պ/մ չափով (Թուրքիայում և Եգիպտոսում՝ ոչ ավել քան 3 000 (երեք հազար) պ/մ չափով), ընդ որում, երբ.

11.5.1 ապահովագրված անձին նման միջամտությունը կատարվում է միայն կյանքին վտանգ սպառնացող դեպքերում

11.5.2 տվյալ վիրաբուժական միջամտությունը միակ կիրառելի տարբերակն է տվյալ վնասվածքի համար (վերոնշյալ կետերի համար անհրաժեշտ է ունենալ բուժող բժշկի գրավոր հաստատում):

11.6 Մեկ կամ մի քանի ապահովագրական պատահարների դեպքում հատուցում կատարելիս ընդհանուր ապահովագրական հատուցման չափը չի կարող գերազանցել Ապահովագրողի՝ տվյալ Պայմանագրում նշված ապահովագրական գումարի չափը:

11.7 Եթե ապահովագրական պատահարը իրենից ներկայացնում է ուշաթափության, օրթոստատիկ կողլապանների, գիտակցության կորստի և սինկոպեի դեպքեր, որոնք ի հայտ են եկել անհայտ և հայտնի պատճառներով, և հետազոտությունների արդյունքում հայտաբերվել են միայն քրոնիկ հիվանդություններ, կամ հիվանդություններ չեն հայտնաբերվել, ապա ապահովագրական պատահարները ենթակա են հատուցման միայն 500 (հինգ հարյուր) պ/մ չափով, ընդ որում վերոնշյալ վիճակները պետք է արձանագրված լինեն շտապ բուժօգնության ծառայության աշխատակիցների կամ լիցենզավորված բուժաշխատողի կողմից:

11.8 Ջոնա 3-ի երկրների տարածքներում ապահովագրական պատահարի դեպքում՝

- Ապահովագրողը և Ասսիսթանս կազմակերպությունը չեն տրամադրում որևէ վճարման երաշխիք որևէ բժշկական հաստատությանը:
- Ապահովագրված անձն ինքն է վճարումներ կատարում բոլոր բժշկական ծառայությունների համար, որից հետո հատուցում ստանալու նպատակով Ապահովագրողին դիմումի հետ միասին ներկայացնում է վճարման և բժշկական փաստաթղթերը:

- Ձոնա 3-ի երկրների կլինիկաներում ամբուլատոր (արտահիվանդանոցային) պայմաններում կատարված հետազոտությունները ենթակա են հատուցման առավելագույնը 1000 (մեկ հազար) պ/մ չափով, եթե այդ հետազոտությունների արդյունքում պարզ է դառնում ապահովագրական պատահարի առկայության փաստը:
- պատահարը ենթակա է հատուցման հիվանդանոցում անցկացրած յուրաքանչյուր օրվա համար ոչ ավել քան 500 (հինգ հարյուր) պ/մ չափով, բայց ոչ ավել քան 3000 (երեք հազար) պ/մ չափով յուրաքանչյուր դեպքի համար:

11.9 Պայմանագրով հստակ չֆիքսված օրերով մեկ ամսվա ընթացքում 8 օր ապահովագրված օրերի քանակով ապահովագրություն ձեռք բերած Ապահովագրված անձի համար յուրաքանչյուր ապահովագրական պատահարի համար հատուցման առավելագույն սահմանաչափը սահմանվում է 1000 (մեկ հազար) պ/մ:

11.10 Ապահովագրական հատուցում իրականացնելուց հետո ապահովագրական գումարը ինքնաշխատ կերպով նվազեցվում է հատուցված գումարի չափով: Ապահովագրական գումարը համարվում է նվազեցված ապահովագրական հատուցում վճարելու մասին Ապահովագրողի եզրակացությունը համապատասխան ստորագրությամբ Ապահովադիրին առձեռն հանձնելու կամ փոստով ուղարկելու պահից: Ապահովագրական հատուցման գումարը ստանալուց հետո Ապահովադիրն իրավունք ունի լրացուցիչ ապահովագրավճարի դիմաց վերականգնել նախնական ապահովագրական գումարի չափը: Նախնական ապահովագրական գումարի չափը չվերականգնելու դեպքում Ապահովագրական պայմանագրի գործողության ընթացքում հաջորդ հատուցման ժամանակ հաշվի է առնվում նվազեցված ապահովագրական գումարը:

12. ԱՊԱՀՈՎԱԳՐՈՂԻ ԿՈՂՄԻՑ ՉՀԱՏՈՒՑՎՈՂ ԾԱԽՍԵՐ

12.1 Համաձայն Կանոնների հատուցման ենթակա չեն հետևյալ արտակարգ բժշկական և բժշկատրանսպորտային ծախսերը՝

12.1.1 ոչ պայմանական չհատուցվող գումարը, եթե այն նախատեսված է Պայմանագրով:

12.1.2 յուրաքանչյուր ապահովագրական դեպքի հետևանքով 250 (երկու հարյուր հիսուն) պ/մ չափը •երազանցող վնասը, եթե Ապահովագրված անձի կողմից կատարված բժշկական և (կամ) բժշկատրանսպորտային ծախսերը համաձայնեցված չեն եղել Ապահովագրողի հետ, Կանոնների 5.3.4, 5.4, 12.1.3 կետերով նախատեսված, բացառությամբ եթե Ապահովագրված անձի (նրա ներկայացուցչի, Ապահովադիրի (եթե ֆիզիկական անձ է) առողջական վիճակը թույլ չի տվել կապվել սերվիսային ծառայության հետ՝ բժշկական և (կամ) բժշկատրանսպորտային օգնությունը և դրա հետ կապված ծախսերը համաձայնեցնելու նպատակով, ընդ որում Ապահովագրողին կամ սերվիսային ծառայությանը հեռախոսազանգով դեպքի վերաբերյալ տեղեկացումը բավարար չէ ծախսերը հատուցման ենթակա ճանաչելու համար: Ապահովադիրին (Ապահովագրված անձին) մատուցած յուրաքանչյուր ծառայություն և դրա համապատասխան արժեքը պետք է համաձայնեցված լինի Ապահովագրողի հետ կամ անմիջապես, կամ սերվիսային ընկերության միջոցով: Սույն կետի համար բացառություն են կազմում 11.7 կետով սահմանված պատահարները:

12.1.3 Բժշկական և բժշկատրանսպորտային ծախսերը համարվում են համաձայնեցված, եթե դրանց ծավալի և արժեքի վերաբերյալ առկա է գրավոր կամ հեռախոսային տեղեկացում Ապահովագրողին կամ Ասսիսթանս կազմակերպությանը և պատասխան գրավոր հաստատում Ապահովագրողի կողմից դրանց հատուցման վերաբերյալ:

12.1.4 Էվակուացիայի (հայրենադարձության) համար կատարված ծախսերն աննշան (ոչ էական) վնասվածքների և հիվանդությունների դեպքում, որոնք Ապահովագրողի կողմից նշանակված բժշկական խորհրդատուի կարծիքով, ենթակա են բուժման տեղում, և չեն խոչընդոտում Ապահովագրված անձի ճանապարհորդության հետագա շարունակմանը,

12.1.5 Ապահովագրողի կողմից չկազմակերպված կամ Ապահովագրողի հետ չհամաձայնեցված էվակուացիայի (հայրենադարձության) համար կատարված ցանկացած ծախսերը, ինչպես նաև ծախսերը, որոնք առաջանում են Ապահովագրված անձի կողմից մշտական բնակության երկիր էվակուացվելուց կամավոր հրաժարվելուց,

12.1.6 պլաստիկ և վերականգնողական վիրաբուժության և տարբեր տեսակի պրոթեզավորման, ներառյալ աչքի և ատամի, ինչպես նաև սրտի և անոթների (աորտային-սնուցող շունտավորման, ստենտավորման), ինչպես նաև սրտի հետ կապված կորոնարոանգիոգրաֆիայի և/կամ յուրաքանչյուր վիրաբուժական միջամտության, նույնիսկ դրանց իրականացման համար բժշկական ցուցման եզրակացության առկայության պարագայում,

12.1.7 բժշկական տեսանկյունից անհրաժեշտ չհամարվող և (կամ) բժշկի կողմից չնշանակված/չցուցված բուժական միջոցառումների տրամադրման հետ կապված ծախսերը,

12.1.8 ոչ ավանդական (ժողովրդական բժշկության) մեթոդներով բուժման հետ կապված ծախսերը,

12.1.9 առողջարանա-կուրորտային բուժման, առողջարանային, թերապևտիկ կամ խնամատարական ծախսերը,

12.1.10 հղիության հետ կապված ցանկացած պաթոլոգիաներ, նորմալ ընթացող հղիության կամ ծննդաբերության, ինչպես նաև երեխայի հետծննդյան խնամքի հետ կապված ծախսերը,

12.1.11 հղիության ընդհատման հետ կապված ծախսերը, որոնք կապված չեն ապահովագրական պատահարի հետ ,

12.1.12 ցանկացած պրոֆիլակտիկ հետազոտության, բժշկական պրոֆիլակտիկ ընդհանուր զննության, ինչպես նաև կանխարգելիչ պատվաստումների հետ կապված ծախսերը,

12.1.13 ՉԻԱՀ/ ՄԻԱՎ, վարակի, դրանց հետևանքների և սրացումների հետ կապված ծախսերը,

12.1.14 ցանկացած երկրի զինված ուժերում Ապահովագրված անձի ռազմական ծառայության կամ կազմավորումներում մասնակցելու արդյունքում հետևանքով կատարված ծախսերը,

12.1.15 ծախսերը, որոնք կարող են հատուցվել այլ աղբյուրներից՝ ներառյալ այլ ապահովագրության պայմանագրերի (վկայագրերի) հիման վրա,

12.1.16 ոչ բժշկական բնույթի ծախսերը, օրինակ հեռախոսագանգի համար վճարները, բացառությամբ ապահովագրական դեպքով պայմանավորված Ապահովագրողին կամ նրա ներկայացուցչին կատարված հեռախոսագանգերի և (կամ) ֆաքսերի համար վճարները,

12.1.17 անօրինական գործողությունների կատարման կամ այդպիսի փորձի կատարման հետ կապված ծախսերը, որոնք ժամանակավոր գումարներ երկրի գործող օրենսդրությանը համապատասխան Ապահովագրված անձի նկատմամբ առաջացնում են վարչական տուգանք կամ քրեական հետախուզում,

12.1.18 վիրուսային հեպատիտների, (բացառությամբ «A» և «E» հեպատիտը) դրանց հետևանքների և սրացումների հետ կապված ծախսերը

12.1.19 ազգականների կողմից հիվանդի բուժման կամ խնամքի հետ կապված ծախսերը, անկախ նրանից հանդիսանում են նրանք արտոնագրված բժշկական մասնագետներ, թե ոչ,

12.1.20 ծախսերը, որոնք կապված են համապատասխան արտոնագիր չունեցող բժշկական հաստատության (բժշկի) կողմից ծառայության մատուցման հետ, կամ երբ բժշկական օգնության տրամադրման պահին բժշկական հաստատության (բժշկի) լիցենզիայի գործողությունը դադարեցված է,

12.1.21 մինչև ապահովագրության ժամկետի սկիզբը կամ նրա լրանալուց հետո հանկարծակի հիվանդության կամ դժբախտ դեպքի տեղի ունենալու հետ կապված ծախսերը, ինչպես նաև Ապահովագրված անձին մշտական բնակության վայր հանդիսացող երկիր վերադառնալուց հետո կատարված ծախսերը,

12.1.22 Բժշկական պարագաների և սարքերի առք և վերանորոգում,

12.1.23 Էվակուացիայի ծախսերը այն հիվանդությունների և մարմնական վնասվածքների դեպքում, որոնք հնարավոր է բուժել տեղում և չեն կարող խոչընդոտել ապահովագրվածի ուղևորությանը դեպի բնակության երկիր,

12.1.24 Հիվանդանոցային, բժշկի կամ բուժքրոջ ծառայությունները, որոնք դիագնոստիկայի և բուժման համար պարտադիր չեն համարվում,

12.1.25 Վերականգնողական և բուժական թերապիա, ֆիզիոթերապիա,

12.1.26 Էքսկուրսիաներին կամ այլ միջոցառումներին մասնակցելու անհնարինության հետևանքով բարոյական վնասի փոխհատուցման ծախսերը,

12.1.27 Մարմնական վնասվածքներ, որոնք ապահովագրվածը ստացել է թռչող ապարատը ղեկավարելու ժամանակ,

12.1.28 Այն հոսպիտալացման և հետազոտությունների ծախսերը, որոնց չի հաջորդում որևէ բժշկական օգնություն կամ բուժում,

12.1.29 Կանոնների 9.2 կետում նշված ապահովագրական պատահարների հետ առնչություն չունեցող այլ ծախսերը:

13. ԿՈՂՄԵՐԻ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐՆ ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ՊԱՏԱՀԱՐ ՏԵՂԻ ՈՒՆԵՆԱԼՈՒ ԴԵՊՔՈՒՄ

13.1 Ապահովագրական պատահարի տեղի ունենալու դեպքում Ապահովագրված անձը (նրա ներկայացուցիչը) կամ Ապահովադիրը պարտավոր է անհապաղ ծանուցել պատահարի մասին սերվիսային ընկերությանը Պայմանագրում նշված հեռախոսահամարներով՝ բժշկական և (կամ) բժշկատրանսպորտային օգնությանը դիմելու և դրա հետ կապված ծախսերը համաձայնեցնելու նպատակով: Ընդ որում անհրաժեշտ է հայտնել հետևյալ տեղեկատվություն՝

13.1.1 Ապահովագրված անձի անուն, ազգանունը,

13.1.2 Պայմանագրի (ապահովագրության վկայագրի) համարը,

13.1.3 տեղի ունեցած պատահարի հանգամանքների նկարագրությունը և պահանջվող օգնության բնույթը,

13.1.4 Ապահովագրված անձի գտնվելու վայրը և հետադարձ կապի համար կոնտակտային հեռախոսի համարը:

13.2 Ապահովագրված անձը իր հետազոտումը կամ բուժումը իրականացնող բժշկին, ինչպես նաև այն բժշկին, որի մոտ նա բուժվել է և (կամ) գտնվել է նրա հսկողության ներքո մշտական բնակության վայրի երկրում, ազատում է մասնագիտական բժշկական գաղտնիքը Ապահովագրողի նկատմամբ պահելու ունեցած պատասխանատվությունից:

14. ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ՀԱՏՈՒՑՄԱՆ ՎՃԱՐՄԱՆ ՀԻՄՔԵՐԸ ԴՐԱ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԿԱՐԳԸ, ՎՆԱՍԻ ԳՆԱՀԱՏՄԱՆ ԿԱՐԳԸ

14.1 Ապահովագրական հատուցումն իրականացվում է, եթե՝

14.1.1 Ապահովագրված անձը բժշկական ծառայություններից օգտվել է սերվիսային ընկերության (Ապահովագրողի ներկայացուցչի) օժանդակությամբ: Բժշկական հաստատությունը, բժիշկը և (կամ) տրանսպորտային կազմակերպությունը հաշիվը՝ կից Պայմանագրով, ուղարկում է անմիջապես սերվիսային ընկերություն (Ապահովագրողի ներկայացուցչին), որը սահմանված կարգով կարգավորում է վնասը և կատարում հաշվարկներ,

14.1.2 Ապահովագրված անձն ինքնուրույն վճարել է ծախսերը (կամ նրան ներկայացվելու է բժշկական հաստատության կամ բժշկի հաշիվը) բժշկական (բժշկատրանսպորտային) օգնության տրամադրման համար: Այս դեպքում Ապահովագրողը տեղի ունեցած պատահարը ապահովագրական ճանաչելու և Կանոնների 12.1.1, 12.1.2 և 12.1.3 կետերի պահանջների պահպանմամբ հատուցում է այդ ծախսերը (կամ վճարում է հաշիվը)՝ Ապահովագրված անձի (նրա լիազորված ներկայացուցչի) գրավոր դիմումի և բնօրինակ փաստաթղթերի և դրանց հաստատված թարգմանությունների հիման վրա:

14.2 Ապահովագրական հատուցում ստանալու մասին դիմումին կից պետք է ներկայացվեն՝

14.2.1. Պայմանագրի (ապահովագրության վկայագրի) բնօրինակը,

14.2.2. բժշկական փաստաթղթերի բնօրինակներ, որոնք ներառում են տեղեկություններ բժշկական օգնությանը դիմելու ամսաթվի, Ապահովագրված անձի ախտորոշման, բժշկական օգնության դիմելու պահին նրա առողջական վիճակի և կատարված բժշկական մանիպուլյացիաների (տրամադրված դեղորայքների) վերաբերյալ՝ դրանք ըստ ամսաթվերի և ըստ առանձին բժշկական ծառայությունների արժեքների տարանջատմամբ (դժբախտ դեպքի մասին բժշկական փաստաթղթեր), ընդ որում հստակ ախտորոշման բացակայությունը հիմք է հանդիսանում տվյալ հայտի մերժման համար:

14.2.3. դժբախտ պատահարի կամ վնասվածքի և կատարվածի հանգամանքները հավաստող պաշտոնական արձանագրություն կամ տեղեկանք,

14.2.4. փաստաթղթեր, որոնք հավաստում են բժշկական ծառայությունների համար կատարված վճարումները՝ վճարման արժույթի և ամսաթվի նշումով,

14.2.5. սահմանված ախտորոշման հետ կապված կամ դեղատոմսերի հավելվածով կամ բժշկական արձանագրության (հաշիվ) մեջ նշումով բժշկի կողմից դուրս գրված դեղորայքների ձեռք բերման համար վճարումների դեղատոմային չեկերը (վճարման հաշիվները),

14.2.6. փաստաթղթեր, որոնք հավաստում են Ապահովագրողի կամ նրա ներկայացուցչի հետ հեռախոսային խոսակցությունների (ֆաքսիմիլայի հաղորդագրությունների) վճարման փաստը,

14.2.7. Ապահովագրողի պահանջի դեպքում՝ լրացուցիչ անհրաժեշտ տեղեկատվություն ապահովագրված անձի առողջական վիճակի մասին (ամբուլատոր կամ ստացիոնար հիվանդի բժշկական քարտը և այլ առաջնային բժշկական փաստաթղթեր): Ապահովագրողն իրավունք ունի նաև ցանկացած բժշկական ձեռնարկությունից ինքնուրույն կատարել

հարցումներ և ստանալ բժշկական փաստաթղթեր, որոնք անհրաժեշտ են ապահովագրական հայտի վերջնական կարգավորման համար,

14.2.8 Ապահովագրողի պահանջի դեպքում՝ արտասահմանյան անձնագիրը՝ Հայաստանի Հանրապետության Պետական տարածքն անցնելու և վերադառնալու մասին սահմանապահ հսկողության նշումով, ինչպես նաև այլ փաստաթղթեր (հյուրանոցի հաշիվներ, ավիատոմսեր և այլն), որոնք հաստատում են Ապահովագրված անձի ապահովագրության տարածքում գտնվելու փաստը և ժամկետները:

14.2.9 Բացի ռուսերեն և անգլերեն լեզվից այլ օտար լեզուներով կազմված վերոնշյալ փաստաթղթերը պետք է ունենան համապատասխան հաստատում ունեցող թարգմանությունները: Ապահովագրողի (ապահովագրված անձի) կողմից փաստաթղթերի թարգմանության համար կատարված ծախսերը Ապահովագրողի կողմից ենթակա են հատուցման:

14.3 Ապահովագրողը (Ապահովագրված անձը) պարտավոր է Կանոններով սահմանված փաստաթղթերը (բացառությամբ գրավոր դիմումի) ներկայացնել պատահարի վերաբերյալ Ապահովագրողին գրավոր դիմում ներակայացնելու օրվանից երկու ամսվա ընթացքում:

Այդ ժամկետում Ապահովագրողի (Շահառուի) կողմից Կանոններով սահմանված փաստաթղթերը չներկայացնելու կամ գրավոր որևէ միջնորդություն սահմանված երկու ամսյա ժամկետը երկարաձգելու մասին չներկայացնելու դեպքում, Ապահովագրողը Կանոնների համաձայն Ապահովագրողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով մերժում է ապահովագրական հատուցման վճարումը, սույն կետում սահմանված ժամկետը լրանալուց հետո հնգօրյա ժամկետում:

Այն դեպքում, երբ Ապահովագրողը գրավոր միջնորդություն է ներկայացնում փաստաթղթերի ներկայացման խոչընդոտների կամ այլ պատճառաբանությամբ սահմանված ժամկետը երկարացնելու մասին, ապա Ապահովագրողը ելնելով տվյալ գործի հանգամանքներից կարող է այդ ժամկետը երկարաձգել մինչև 6 վեց ամիս ժամկետով: Նշված ժամկետում Ապահովագրողի կողմից սահմանված պարտավորության չկատարման հետևանքները նույնանում են սույն կետի երկրորդ պարբերությունում սահմանված դրույթների հետ:

14.4 Ապահովագրական հատուցման հաշվարկը կատարվում է Կանոնների 14.2 կետում նշված փաստաթղթերի բնօրինակների հիման վրա՝ դիմումի ներկայացման օրվա դրությամբ ՀՀ կենտրոնական բանկի կողմից արտարժույթի նկատմամբ սահմանված փոխարժեքին համապատասխան:

14.5 Ապահովագրողն ապահովագրական պատահարի մասին Կանոններով նշված բոլոր անհրաժեշտ փաստաթղթերն ստանալուց հետո 7 աշխատանքային օրվա ընթացքում պարտավոր է օրենքի և այլ իրավական ակտերի համաձայն ընդունել ապահովագրական հատուցումը վճարելու կամ մերժելու մասին եզրակացություն(որոշում):

Ապահովագրողն ապահովագրական հատուցումը վճարելու մասին որոշումը պատշաճ կերպով Ապահովագրողին (Ապահովագրված անձին, շահառուին) հանձնում է անձամբ կամ տրամադրում է փոստային առաքմամբ: Ապահովագրական հատուցման նվազեցման կամ հատուցման մերժման դեպքում Ապահովագրողի կայացրած պատճառաբանված որոշումը հնգօրյա ժամկետում պատվիրված նամակով առաքվում է Ապահովագրողին (Ապահովագրված անձին, շահառուին)՝ նրա մշտական բնակության հասցեով:

14.6 Ապահովագրական հատուցման վճարումը իրականացվում է Ապահովագրողի կողմից ապահովագրական պատահարի վերաբերյալ հատուցման մասին որոշման ընդունումից հետո 10 աշխատանքային օրվա ընթացքում:

III. ԲԱԺԻՆ. ՃԱՆԱՊԱՐՀՈՐԴՈՒԹՅԱՆ ՄԵՋ ԳՏԵՎՈՂ ԱՆՁԱՆՑ ՈՒՂԵՔԵՌՈՒ ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅՈՒՆ

15. ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅԱՆ ՍՈՒՔՅԵԿՏ

15.1 Ապահովագրողը կնքում է ճանապարհորդության մեջ գտնվող անձանց աջակցության ապահովագրության պայմանագրեր, որոնք կարող են կնքվել ինչպես Ապահովագրողի, այնպես էլ հոգուտ Շահառուի՝ անձի, որն ապահովագրվող գույքի պահպանման համար ունի օրինական գույքային շահ: Եթե Պայմանագիրը կնքված է հոգուտ Շահառուի, ապա նրա վրա են տարածվում Ապահովագրողի իրավունքներն ու պարտականությունները: Սույն Կանոնների համաձայն Շահառու կարող են հանդիսանալ միայն ֆիզիկական անձինք:

16. ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅԱՆ ՕԲՅԵԿՏ

16.1 Ճանապարհորդության մեջ գտնվող անձանց ուղեբեռի ապահովագրության դեպքում Կանոններով Ապահովագրության օբյեկտ են հանդիսանում Ապահովագրված անձի գույքային շահերը՝ կապված իրեն պատկանող ուղեբեռի տնօրինման, տիրապետման և օգտագործման հետ: Ուղեբեռի տակ հասկացվում են Ապահովադրի (Շահառուի)՝ ուղևորության ընթացքում փոխադրվող անձնական իրերը (նրան սեփականության իրավունքով պատկանող, չվարձակալված, չփոխառնված և այլն), ինչպես տրանսպորտային կազմակերպություն հանձնած ուղեբեռը, այնպես էլ ձեռքի ծանրոցը:

17.1 ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ՊԱՏԱՀԱՐ

17.1 Ապահովագրական պատահար է հանդիսանում Պայմանագրով նախատեսված իրադարձությունը, որի արդյունքում առաջանում է Ապահովագրողի ապահովագրական հատուցում վճարելու պարտականությունը:

17.2 Ապահովագրական պատահար է համարվում ապահովագրության պայմանագրի գործողության ընթացքում տեղի ունեցած և փաստաթղթորեն հաստատված ուղեբեռի ամբողջական ոչնչացումը, մասնակի վնասվածքը, կորուստը, որոնք հետևանք են հետևյալ իրադարձությունների՝

17.2.1 տարերային աղետներ՝ փոթորիկ, կարկուտ, ջրհեղեղ, երկրաշարժ, մրրիկ, սողանք և այլն

17.2.2 հրդեհ, կայծակի հարված, պայթյուն, հրդեհի մարմանն ուղղված միջոցառումներ

17.2.3 գողություն, թալան, կողոպուտ

17.2.4 Ապահովագրված անձի հետ կապված ճանապարհատրանսպորտային պատահարներ կամ դժբախտ դեպքեր

17.2.5 երրորդ անձանց կողմից ուղեբեռի դիտավորյալ վնասում,

17.3 Ապահովագրողը հատուցում է նաև գտնված իրերի որոնման, փորձաքննության, պահպանման և փոխադրման ծախսերը, ինչպես նաև ապահովագրված գույքի փրկման և կարգի բերման հետ կապված ծախսերը: Անուղղակի ծախսերը (հյուրանոցային կացության, տրանսպորտային ծախսեր և այլն) հատուցման ենթակա չեն:

17.4 Ապահովագրողը չի իրականացնում ապահովագրական հատուցում, եթե ապահովագրական պատահարը տեղի է ունեցել կապված՝

17.4.1 Ապահովագրված անձի ալկոհոլային, թմրանյութային կամ տոքսիկ արբեցության հետ

17.4.2 Ապահովագրված անձի ինքնասպանության (ինքնասպանության փորձի) հետ

17.4.3 միջուկային պայթյունի, ռադիացիայի, ռադիոակտիվ ազդեցության կամ վարակման այլ տեսակների հետ

17.4.4 Ապահովագրված անձի և/կամ շահագրգիռ երրորդ անձանց դիտավորյալ գործողությունների հետ՝ ուղղված ապահովագրական պատահարի տեղի ունենալուն

17.4.5 Ապահովագրված անձի հակաօրինական գործողություններ, որոնք ապահովագրական պատահարի տեղի ունենալու հետ գտնվում են պատճառահետևանքային կապի մեջ

17.4.6 պատերազմական գործողությունների և դրանց հետևանքների, ժողովրդական հուզումների, գործադուլների, ըմբոստացումների, խռովությունների, մասսայական անկարգությունների, ահաբեկչական ակտերի և դրանց հետևանքների հետ,

17.4.7 Ապահովագրված գույքի մաշվածության, ժանգոտման, բորբոսի, գունազրկման և որակական հատկությունների այլ փոփոխությունների հետ

17.4.8 միջատների, կրծող կենդանիների կողմից գույքի վնասման հետ

17.4.9 քերձվածքի, ներկի թեփոտման և գույքի արտաքին տեսքի այլ խախտումների հետ, որոնք չեն խոչընդոտում դրա գործառնություններին

17.4.10 Ապահովադրի կողմից Ապահովագրված գույքի փրկմանն ուղղված միջոցառումների ժամանակին չձեռնարկման հետ

17.4.11 առանձին կամ փոստով ուղարկված ուղեբեռի վնասման հետ:

18. Ուղեբեռի առարկաներ, որոնք ապահովագրության ենթակա չեն: Հատուկ պայմաններ

- 18.1 Պայմանագրի գործողությունը տարածվում է Ապահովադրի ամբողջ ուղեբեռի վրա, բացառությամբ ներքննչյալ թվարկված առարկաների, եթե ապահովագրության պայմանագրով այլ բան նախատեսված չէ՝
- 18.1.1 ՀՀ դրամով և արտարժույթով կանխիկ փող, արժեթղթեր, գեղչային և այլ բանկային քարտեր
- 18.1.2 թանկարժեք մետաղներից, թանկարժեք և կիսաթանկարժեք քարերից զարդեր, ինչպես նաև թանկարժեք մետաղների ձուլակտորներ, առանց շրջանակի թանկարժեք և կիսաթանկարժեք քարեր
- 18.1.3 մորթուց պատրաստված իրեր (բնական և արհեստական մորթի)
- 18.1.4 հին և արժեքավոր ու յուրահատուկ իրեր, արվեստի գործեր ու հավաքածուի բաղկացուցիչ առարկաներ
- 18.1.5 ուղեգնացության փաստաթղթեր, անձնագիր և փաստաթղթերի ցանկացած ձևեր, սլայդեր, նկարներ, կինոժապավեններ
- 18.1.6 ձեռագրեր, գծագրեր, նախագծեր, գծանկարներ, մոդելներ, հաշվապահական և աշխատանքային թղթեր
- 18.1.7 պրոթեզների ցանկացած տեսակներ
- 18.1.8 կոնտակտային լինզաներ
- 18.1.9 կենդանիներ, բույսեր և սերմեր
- 18.1.10 ավտո, մոտո, հեծանիվային, օդային և ջրային տրանսպորտային միջոցներ, ինչպես նաև դրանց պահեստամասեր
- 18.1.11 հոգևոր մշակույթի պարագաներ
- 18.1.12 սպորտային պարագաներ, որոնց ամբողջական ոչնչացումը կամ վնասվածքը տեղի է ունեցել սպորտով զբաղվելիս կամ սպորտային մրցությունների ժամանակ:
- 18.2 Մորթուց պատրաստված իրերի (բնական և արհեստական մորթի), զարդերի (թանկարժեք մետաղներից, կիսաթանկարժեք և թանկարժեք քարերից պատրաստված իրեր), տեղափոխվող աուդիո, ֆոտո, կինո, վիդեո սարքավորումների, հաշվող և ծրագրային համակարգերի, տպագրող մեքենաների և նրանց պատկանող ցանկացած այլ իրերի վրա ապահովագրական ծածկույթը տարածվում է միայն հետևյալ պայմանների պահպանման դեպքում,
- 18.2.1 Ապահովադիրը դրանց վերաբերվում է անհրաժեշտ զգուշությամբ և դրանք օգտագործում է ուղղակի նշանակմամբ
- 18.2.2 Ապահովադրի կողմից ձեռնարկվել են բոլոր անհրաժեշտ միջոցառումները դրանց ամբողջականության և պահպանման համար
- 18.2.3 Այդ առարկաները գտնվում են պահոցներում, պահման խցիկներում կամ դրանց համար հատուկ նշանակության վայրերում
- 18.2.4 Այդ առարկաները գտնվում են հուսալի փակված սենյակներում, ուղևորափոխադրող նավերի սենյակներում և հսկվող պահարաններում
- 18.3 Ավտոմեքենայից ուղեբեռի գողացման դեպքում ապահովագրական հատուցումը վճարվում է փաստաթղթերի առկայության դեպքում, որոնք հաստատում են, որ.
- 18.3.1 Գողությունը տեղի է ունեցել օրվա ցերեկային ժամերին (6:00-22:00)
- 18.3.2 Գողացված իրերը գտնվում էին վերահսկվող կայանավայրում կայանված ավտոմեքենայի փակված բեռնախցիկում: Այս դեպքում ապահովագրական ծածկույթը չի տարածվում մորթյա իրերի, զարդերի (թանկարժեք մետաղներից, թանկարժեք և կիսաթանկարժեք քարերից պատրաստված իրեր) փոխադրվող (շարժական) աուդիո, ֆոտո, կինո, վիդեո սարքավորումների հաշվողական և ծրագրային համակարգի, տպագրող մեքենաների և նրանց պատկանող ցանկացած այլ իրերի վրա
- 18.3.3 Գողությունը կատարվել է երեք ժամից ոչ ավել կայանման ժամանակ:
- 18.4 Կողմերի հատուկ համաձայնությամբ ապահովագրական ծածկույթը կարող է տարածվել այն ապահովագրական դեպքերի վրա, որոնք տեղի են ունեցել ուղեբեռի՝ Ապահովադրի հսկողության տակ, տրանսպորտային ծառայության ուղեբեռային ծառայության բաժնում, պահման խցիկներում, հսկվող պահարանում գտնվելու և պաշտոնապես ներկայացված բեռնակիրների ծառայություններից օգտվելու ժամանակ:

19. Ապահովագրական գումար

19.1 Ապահովագրական գումարը Պայմանագրով սահմանված դրամական գումարն է, որի սահմաններում Ապահովագրողն իրականացնում է հատուցում և ապահովագրական գումարը չի կարող գերազանցել ապահովագրված գույքի իրական արժեքը: Այդպիսի արժեք է համարվում Պայմանագրի կնքման պահին և վայրում գույքի իրական արժեքը:

Իրական արժեքը որոշվում է՝ ելնելով այն գումարից, որն անհրաժեշտ է վնասված առարկային փոխարինող առարկա ձեռք բերելու համար՝ հանելով մաշվածությունը: Մորթուց պատրաստված իրերի (բնական և արհեստական մորթի), զարդերի (թանկարժեք մետաղներից, կիսաթանկարժեք և թանկարժեք քարերից պատրաստված իրեր) համար իրական արժեքը սահմանվում է՝ հաշվի առնելով նմանատիպ և միևնույն որակի իրերի համար շուկայական առևտրում կիրառվող արժեքները:

19.2.1 Կանոններով ապահովագրված ուղեբեռի յուրաքանչյուր կտորի համար ապահովագրական գումարը սահմանվում է 500 (հինգ հարյուր) պ/մ չափով, իսկ ընդհանուր ուղեբեռի համար ապահովագրական գումարի առավելագույն չափը սահմանվում է 1000 (հազար) պ/մ չափով, եթե Պայմանագրով ապահովագրական գումարի այլ չափ սահմանված չէ:

20. Ապահովագրության պայմանագրի գործողությունը

20.1 Պայմանագիրը կնքվում է Ապահովագրված անձի ճանապարհորդության մեջ գտնվելու ժամանակով, սակայն մեկ տարուց ոչ ավել, եթե այլ բան նախատեսված չէ Պայմանագրով:

20.2 Պայմանագիրը չի գործում այն պետության տարածքում, որի քաղաքացի է հանդիսանում Ապահովագրված անձը կամ ունի կացության իրավունք, եթե այլ բան նախատեսված չէ Ապահովագրության պայմանագրով:

20.3 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում ապահովագրության վկայագրում (անհատական քարտում) նշված ապահովագրության սկսման ամսաթվի 0:00 ժամից, սակայն ոչ շուտ քան Ապահովադրի կողմից ապահովագրության ողջ ժամկետի համար ապահովագրավճարի վճարման օրվանից և միայն Ապահովագրված անձի կողմից տվյալ երկրի պետական սահմանը հատելուց հետո (անձնագրում սահմանապահ ծառայությունների նշում), եթե պայմանագրով այլ բան նախատեսված չէ:

21. Ապահովագրության պայմանագրի կնքման կարգը

21.1 Ապահովագրության պայմանագիրը կնքվում է նախքան ճանապարհորդության սկիզբը: Պայմանագիր կնքելու համար Ապահովադիրը գրավոր կամ բանավոր դիմում է Ապահովագրողին (նրա լիազոր ներկայացուցչին) և հայտնում է իր ապահովագրության պայմանագիր կնքելու մտադրության մասին՝ նշելով հետևյալ տվյալները՝

21.1.1 Ապահովադրի անունը, ազգանունը, հայրանունը՝ հայերեն կամ ռուսերեն և անգլերեն լեզուներով, ծննդյան ամսաթիվը, հասցեն և հեռախոսահամարը,

21.1.2 Եթե Ապահովադիրը իրավաբանական անձ է հանդիսանում, ապա պետք է տրամադրի անվանումը, իրավաբանական հասցեն, հեռախոսը և բանկային ռեկվիզիտները

21.1.3 Ճամփորդության մեջ գտնվելու ժամանակահատվածի սկիզբը և ավարտը,

21.1.4 Այն երկրները, որոնց տարածքում պետք է գործի Ապահովագրության պայմանագիրը, ինչպես նաև այն երկրները, որոնց տարածքով անցնում է ուղևորության ճանապարհը

21.1.5 Ուղեբեռի նկարագրությունը և նրանում գտնվող առարկաների ցուցակը (նշելով նրանց արժեքը): Ապահովագրողն իրավունք ունի Ապահովադրից պահանջել ուղեբեռում ընդգրկված իրերի արժեքը հավաստող փաստաթղթեր

21.1.6 Ապահովագրական գումարը

21.2 Ապահովագրության պայմանագրի կնքման ժամանակ Ապահովադիրը պարտավոր է Ապահովագրողին ներկայացնել իրեն հայտնի բոլոր այն հանգամանքները, որոնք կարող են ռիսկի գնահատման համար նշանակալից ազդեցություն ունենալ:

21.3 Ապահովագրության պայմանագրի կնքման փաստը հաստատվում է Ապահովագրողի կողմից Ապահովադիրին հանձնվող Ապահովագրության վկայագրով և դրան կցված Կանոններով:

21.4 Ապահովագրողն իրավունք ունի առանց որևէ բացատրության մերժել ապահովագրության պայմանագրի կնքումը:

22. Կողմերի գործողությունները ապահովագրական պատահարի դեպքում

22.1 Ապահովագրական պատահարի տեղի ունենալու ժամանակ Ապահովադիրը դիմում է դեպքի վայրի իրավասու մարմիններին (հյուրանոցի ադմինիստրացիա, տրանսպորտային կազմակերպությունների ներկայացուցիչներ, տեղական իրավապահ մարմիններ) փաստաթղթերի ստացման համար, որոնք արձանագրում են ուղեբեռի կորստի կամ վնասման փաստը (օրինակ՝ փոխադրողի ներկայացուցչի կողմից կազմված առևրային ակտ): Նշված մարմինների կողմից համապատասխան փաստաթղթերի կազմումից հրաժարվելը պետք է լինի ձևակերպված գրավոր տեսքով:

22.2 Ապահովագրական հատուցման ստացման փաստաթղթերը և դիմումը պետք է Ապահովագրողին ներկայացվեն Ապահովադիրի ուղևորությունից (որի ընթացքում տեղի է ունեցել Ապահովագրական պատահարը) վերադառնալու պահից սկսած 30 (երեսուն) օրացուցային օրերի ընթացքում: Դիմումի մեջ պետք է նշված լինեն Ապահովագրական պատահարի հանգամանքները և բնույթը, տուրիստական խումբը ձևավորող կազմակերպությունը, արտասահման մեկնելու ժամկետը: Դիմումի մեջ նաև պետք է ներառվի վնասված կամ կորած իրերի ցուցակը: Դիմումին կցվում են կորած կամ վնասված իրերի չեկեր, տեղեկանքներ, պիտակներ և այլն նմանատիպ թղթեր: Դիմումին պետք է կցվեն նաև սույն Կանոնների 22.1-ում նշված փաստաթղթերը (փաստաթղթերի բնօրինակներից թարգմանություններ, բացի հայերեն, ռուսերեն և անգլերեն լեզուներից), ինչպես նաև ապահովագրության վկայագիրը:

22.3 Ապահովագրողն իրավունք ունի ներկայացված փաստաթղթերը ստուգել, ապահովագրական պատահարի մասին տեղեկություններ ունեցող կազմակերպություններին հարցումներ կատարել: Ապահովադիրը պարտավոր է Ապահովագրողի, ապահովագրական պատահարի հետ կապված հարցերին տալ գրավոր բացատրություններ:

22.4 Ապահովագրական հատուցումը վճարվում է

ա) ուղեբեռի ամբողջական ոչնչացման, ամբողջական կամ մի մասի կորստի դեպքում նրա իրական արժեքի չափով՝ հանած վնասված ուղեբեռի մնացորդային արժեքը, սակայն ապահովագրական գումարից ոչ ավել ք) ուղեբեռի մի մասի վնասման դեպքում՝ վերանորոգման ծախսերի սահմաններում

22.5 Ուղեբեռի ամբողջական ոչնչացում է համարվում, եթե վերանորոգման ծախսերը, հաշվի առնելով մաշվածությունը և մնացորդային արժեքը, գերազանցում են ուղեբեռի իրական արժեքը: Ապահովագրված ուղեբեռը համարվում է վնասված, եթե վերանորոգման ծախսերը և մնացորդային արժեքը չեն գերազանցում չվնասված ուղեբեռի իրական արժեքը:

22.6 Վնասի չափը սահմանվում է յուրաքանչյուր առարկայի համար առանձին: Հատուցման ընդհանուր գումարը չի կարող գերազանցել Պայմանագրում սահմանված ապահովագրական գումարի չափը:

22.7 Եթե գողացված (կորած) առարկան վերադարձվել է Ապահովադիրին, ապա նա պարտավոր է Ապահովագրողին վերադարձնել ստացված ապահովագրական հատուցումը՝ հանելով ապահովագրական պատահարի հետ կապված վերանորոգման կամ վերադարձված առարկայի կարգի բերման ծախսերը, ոչ ուշ, քան գողացված (կորած) առարկայի վերադարձման պահից հետո 15 օրացուցային օրերի ընթացքում:

22.8 Եթե վնասված կամ կորած ուղեբեռի կամ նրա մի մասի համար Ապահովադիրը երրորդ անձանցից ստացել է հատուցում, ապա Ապահովագրողը վճարում է միայն պայմանագրում նշված ապահովագրական գումարի և երրորդ անձանցից ստացված գումարի տարբերությունը: Այդպիսի գումարիների ստացման դեպքում Ապահովադիրը պարտավոր է անհապաղ հայտնել Ապահովագրողին: Այն դեպքում, երբ վնասված կամ կորած

ուղեբեռը հանձնվել է բեռնափոխադրողին որպես ուղեբեռ կամ գտնվել է ուղևորի մոտ (ձեռքի ճամպուրակ), ապահովագրական հատուցումը կատարվում է ի լրումն բեռնափոխադրման պայմանագրով նախատեսված բեռնափոխադրողի հատուցումների, և միայն ապահովադրի կողմից այդպիսի հատուցումներ ստանալուց հետո:

22.9 Կումպլեկտի (հավաքածուի) մեջից առանձին առարկաների կորստի (գողության) դեպքում վնասի գումարը սահմանվում է որպես տվյալ կումպլեկտի (հավաքածուի) արժեքի և պահպանված առարկաների արժեքների տարբերություն:

22.10 Ապահովագրական հատուցումը տրվում է Ապահովադրին (Շահառուին) միանվագ Ապահովագրողի կողմից ապահովագրական պատահարի բոլոր հանգամանքների ուսումնասիրությունից և ապահովագրական հատուցման որոշումն ընդունելուց հետո 15 (տասնհինգ) աշխատանքային օրերի ընթացքում:

23. Ապահովագրական հատուցման մերժման դեպքերը

23.1 Ապահովագրողն իրավունք ունի ամբողջությամբ կամ մասամբ մերժել ապահովագրական հատուցումը, եթե Ապահովադիրը կամ Շահառուն

23.1.1 խախտել են Կանոնների 22.2 և 22.8 կետերը

23.1.2 ապահովագրական պայմանագրի կնքման ժամանակ չեն ներկայացրել սույն Կանոնների 21.1.5 կետով սահմանված փաստաթղթերը,

23.1.3 ներկայացրել է ապահովագրական պատահարի վերաբերյալ կեղծ տեղեկատվություն կամ փաստաթղթեր,

23.1.4 Ապահովագրողի կողմից սուբրոգացիայի պահանջի իրականացման նպատակով չեն ներկայացրել անհրաժեշտ փաստաթղթեր և տեղեկատվություն

23.1.5 դիտավորյալ կամ անզգույշ մասնակցել են վնասի չափի մեծացմանը կամ չեն ձեռնարկել խելամիտ միջոցառումներ դրա նվազեցման համար:

23.2 Ապահովագրական հատուցման մերժման որոշման մասին Ապահովադրին տեղեկացվում է գրավոր տեսքով՝ մերժման պատճառների հիմնավորմամբ:

IV. ԲԱԺԻՆ. ԱՊԱՀՈՎԱԳՐՎԱԾ ԱՆՁԻ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՊԱՏԱՄԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅՈՒՆ

24. ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅԱՆ ՍՈՒԲՅԵԿՏ

24.1 Համաձայն Կանոնների, Ապահովագրողը գործունակ ֆիզիկական անձանց (այսուհետև Ապահովադիր) հետ կնքում է երրորդ անձանց (այսուհետև երրորդ անձ, շահառու) կյանքին, առողջության կամ գույքին հասցված վնասներից պատասխանատվության ապահովագրության պայմանագրեր:

24.2 Պայմանագիրը կարող է կնքվել ինչպես Ապահովադրի, այնպես էլ այլ ֆիզիկական անձի (այսուհետև Ապահովագրված անձ) պատասխանատվության ապահովագրության վերաբերյալ:

24.3 պատասխանատվության ապահովագրության պայմանագիրը համարվում է կնքված հոգուտ այն անձանց, ում կարող է հասցվել վնաս, նույնիսկ այն դեպքում, եթե պայմանագիրը կնքվել է հոգուտ Ապահովադրի կամ վնասի համար պատասխանատու Ապահովագրված անձի, կամ պայմանագրով սահմանված չէ թե ում օգտին է այն կնքվել:

Անձը, ում պատասխանատվության ռիսկն ապահովագրվել է պետք է նշվի պայմանագրում, եթե այդ անձը չի նշվել, ապա համարվում է ապահովագրված Ապահովագրված անձի պատասխանատվությունը:

24.4 Սույն ապահովագրությունը չի տարածվում այն ապահովագրական պատահարների վրա, որոնց հետևանքով երրորդ անձանց կյանքին, առողջության կամ գույքին հասցված վնասները արդեն իսկ ապահովագրված են տվյալ երկրի օրենսդրությամբ սահմանված կարգով:

25. Ապահովագրության օբյեկտ

25.1 Ապահովագրության օբյեկտ հանդիսանում է Ապահովադրի (Ապահովագրված անձի) այն գույքային շահերը, որոնք չեն հակասում ՀՀ օրենսդրությանը և կապված են Ապահովադրի կողմից ֆիզիկական անձանց կյանքին, առողջությանը կամ գույքին, ինչպես նաև իրավաբանական անձանց գույքին պատճառված վնասի հատուցման հետ:

25.2 Ապահովագրությունը չի տարածվում պատասխանատվության վրա, որը կապված է

- ավտոտրանսպորտային միջոցների տնօրինման, օգտագործման հետ,
- Ապահովադրի (Ապահովագրված անձի) կողմից հակաօրինական գործողությունների հետ,
- պայմանագրում սահմանված տարածքներից դուրս փոխադրումների և բեռնափոխադրումների հետ,
- մշտական, պարբերաբար կամ երկարատև ջերմային կամ գազի ազդեցության, գոլորշու, ճառագայթների, հեղուկի, խոնավության կամ ցանկացած այլ՝ այդ թվում նաև ոչ մթնոլորտային տեղումների (մոխիր, ծուխ, փոշի և այլն) հետևանքով առաջացած վնասների հետ,
- Ապահովագրված անձի մասնագիտական գործունեության հետ,
- Ապահովագրված անձի կողմից վարձով (վարձույթ, լիզինգ), գրավով կամ պատասխանատու պահպանման ընդունված իրերի վնասվելու, ոչնչացման կամ փչացման հատուցման պահանջի հետ,
- Պայմանագրերի կամ ապահովագրված անձի հետ համաձայնեցված այլ ֆինանսական պարտավորությունների հետ կապված հատուցման պահանջների, ինչպես նաև վճարումների հետ, որոնք կատարվում են որոշակի պարտավորությունների կատարման կամ պայմանագրերից բխող տույժերի փոխարեն
- Երաշխիքների կամ նմանատիպ պարտավորությունների կամ երաշխիքային պայմանագրերից բխող պահանջների հետ
- ՀՀ գործող օրենսդրությամբ նախատեսված հատուցման չափերից ավել ներկայացված պահանջների հետ
- հեղինակային իրավունքի, հայտանագործության իրավունքի, գյուտի կամ արտադրության օրինակների հետ կապված վնասների
- հատուցման պահանջների կամ նմանատիպ իրավունքների հետ, ներառյալ՝ գրանցված ֆիրմային և ապրանքային նշանների, դրանց տարրերի և անվանման չթույլատրված օգտագործումը
- բարոյական վնասների հատուցման պահանջների հետ
- պատվի, արժանապատվության և գործարար համբավի պաշտպանության պահանջների հետ:

26. Ապահովագրական պատահար

26.1 Համաձայն Կանոնների ապահովագրական պատահար է հանդիսանում Պայմանագրի գործողության ընթացքում տեղի ունեցած իրադարձությունը, որը քաղաքացիական օրենսգրքի նորմերին համապատասխան հիմք է հանդիսանում երրորդ անձանց կողմից, իրենց պատճառված վնասի հատուցման համար, Ապահովադրի պահանջի ներկայացմանը:

26.2 Կանոններով ապահովագրական պատահար է համարվում Ապահովագրողի ՀՀ քաղաքացիական օրենսգրքի ուժով վնասը հատուցելու պարտավորության սահմանման փաստը, որը հասցվել է տուժած անձին (անձանց) Պայմանագրով սահմանված տարածքում Ապահովագրված անձի մեղավորությամբ՝ առանց դիտավորության ծագած պատահարների հետևանքով:

26.3 Պատահարը համարվում է ապահովագրական, եթե վնասի պատճառման փաստը հաստատված է դատական մարմինների իրավական ուժի մեջ մտած որոշումների կամ Ապահովագրողի գրավոր համաձայնությամբ Ապահովադրի (Ապահովագրված անձի) տված համաձայնությունը, կապված Ապահովագրված անձանց կողմից երրորդ անձանց կյանքին և առողջությանը կամ գույքին հասցված վնասը հատուցելու գույքային պահանջների հետ:

27. Ապահովագրական հատուցում

27.1 Ապահովագրողը կրում է պատասխանատվություն, եթե ապահովագրական պատահարը, կապված Ապահովադրի ապահովագրված գործունեության հետ, առաջացել է

ա) տուժողի մահ, մարմնական վնաս

բ) երրորդ անձանց պատկանող գույքի ոչնչացում կամ վնասվածք (գույքային վնաս):

27.2 Ապահովագրողը հատուցում է նաև Ապահովադրի կողմից կատարված այն խելամիտ ծախսերը, որոնք իրականացվել են այլ անձանց կյանքը և ունեցվածքը փրկելու կամ վնասի չափը փոքրացնելու համար, որոնց ապահովագրական պատահարի հետևանքով հասցվել է վնաս:

27.3 Ապահովագրական ծածկույթը տարածվում է բացառապես այն ապահովագրական պատահարների վրա, որոնք տեղի են ունեցել Պայմանագրի գործողության ընթացքում: Եթե Պայմանագրի գործողության ընթացքում տեղի ունեցած ապահովագրական պատահարը հետևանք է նախքան պայմանագրի ուժի մեջ մտնելը տեղի ունեցած կամ սկսած պատճառների, ապա ապահովագրական հատուցումը ենթակա է վճարման միայն այն դեպքում, եթե Ապահովադիրը տեղյակ չի եղել և չէր կարող տեղյակ լինել ապահովագրական պատահարի առաջացմանը նպաստող պատճառների մասին:

27.4 Ցանկացած դեպքում ապահովագրական պատասխանատվությունը չի տարածվում

- Պայմանագրում սահմանված տարածքից դուրս տեղի ունեցած վնասի հատուցման պահանջի վրա,
- Ապահովադրի կամ դիտավորությամբ վնաս հասցրած ցանկացած այլ անձի ներկայացրած պահանջի վրա: Դիտավորությամբ հասցված վնասի տակ հասկացվում է կատարած գործողությունը կամ անգործությունը, որը գիտակցաբար թույլատրվել է պատասխանատու անձի կողմից և դրա հետևանքով ապահովագրական պատահարի ի հայտ գալու հավանականությունը բավականին մեծ է,
- Ապահովադիրների միմյանց հանդեպ ներկայացված այն պահանջների վրա, որոնց պատասխանատվություններն ապահովագրված են միևնույն պայմանագրով,
- ներկայացված ցանկացած պահանջի վրա, որը հասցվել է ռազմական գործողությունների, ազգային շարժումների, ապստամբությունների, մասսայական անկարգությունների, ահաբեկչական ակտերի հետևանքով:
- ներկայացված այնպիսի պահանջների վրա, որոնք առաջացել են Ապահովադրի կողմից Ապահովագրողի հետ համաձայնեցրած ժամկետներում պատահարի այն հանգամանքների չվերացման հետ, որոնք զգալիորեն բարձրացնում են ռիսկայության աստիճանը և որոնց վերացման համար, ընդունված նորմերին համապատասխան, Ապահովագրողի կողմից Ապահովադրին տրվել են ցուցումներ,
- այն պատահարների վրա, որոնք հետևանք են ռադիոակտիվ վարակման, ճառագայթման և միջուկային վառելիքի օգտագործման հետ կապված այլ գործողությունների, այն պատահարների վրա, որոնք առաջացել են Ապահովադրի կողմից օրենքի, որոշումների, տեղեկագրային և արտադրական կանոնների, նորմերի և նորմատիվային փաստաթղթերի խախտման հետևանքով:

28. Ապահովագրական գումար և պատասխանատվության սահմանաչափ

28.1 Ապահովագրական գումար (պատասխանատվության սահմանաչափ) է հանդիսանում այն գումարը, որը սահմանված է ապահովագրության պայմանագրում, որից ելնելով սահմանվում է ապահովագրավճարը և ապահովագրական հատուցումը:

28.2 Պայմանագրում նշված պատասխանատվության սահմանաչափը համարվում է սահմանված բոլոր տեսակի վնասների համար միասնական գումարով ինչպես ֆիզիկական, այնպես էլ գույքային վնասների համար, եթե Պայմանագրում պատասխանատվության այլ սահմանաչափերը համաձայնեցված չեն

- յուրաքանչյուր ապահովագրված ռիսկի համար, ներառյալ դատական ծախսերի փոխհատուցումը
- մեկ ապահովագրական պատահարի համար
- մեկ ապահովագրական պատահարի հետևանքով տուժած մեկ անձի հատուցման չափը

28.3 Ապահովագրության մեկ տարվա ընթացքում տեղի ունեցած ապահովագրական պատահարների հետևանքով վճարման ենթակա ապահովագրական հատուցումների հանրագումարը չի կարող գերազանցել մեկ տարվա համար սահմանված պատասխանատվության սահմանաչափը:

28.4 Կանոններով Պայմանագրի գործողության ընթացքում ընդհանուր ապահովագրական գումարը սահմանվում է 30 000 (երեսուն հազար) պ/մ, իսկ մեկ ապահովագրական պատահարի համար ապահովագրական պատահարը սահմանվում է 5 000 (հինգ հազար) պ/մ, եթե Պայմանագրով այլ բան նախատեսված չէ:

29. Ապահովագրության պայմանագրի կնքման կարգը

29.1 Պայմանագիրը կնքվում է Ապահովադրի գրավոր դիմումի հիման վրա:

Դիմումը պետք է ներառի ապահովագրության օբյեկտների վերաբերյալ անհրաժեշտ տեղեկատվությամբ: Պայմանագրի կնքումից հետո դիմումը հանդիսանում է դրա մասը:

Պայմանագրով (վկայագրով) սահմանված այլ պայմանները և հատուկ պայմանները չպետք է ընդլայնեն պատասխանատվության ծավալը և Ապահովագրողի՝ Պայմանագրով սահմանված ապահովագրական ծածկույթը:

29.2 Պայմանագրի կնքման ժամանակ Ապահովադիրը պարտավոր է Ապահովագրողին հայտնել իրեն հայտնի բոլոր այն հանգամանքները, որոնք կարող են ռիսկի գնահատման համար նշանակալից ազդեցություն ունենալ: Այս պարտավորության չկատարումը կհանգեցի Ապահովագրողի հատուցում իրականացնելու պարտավորությունից ազատմանը: Պայմանագրի կնքման ժամանակ Ապահովադիրը պարտավոր է պատասխանել Ապահովագրողի բոլոր հարցերին, որոնք կնպաստեն ռիսկի գնահատմանը:

29.3 Պայմանագրի կնքման փաստը հաստատվում է Ապահովագրողի կողմից Ապահովադրին հանձնվող Ապահովագրության վկայագրով և դրան կցված Կանոններով:

30. Չհատուցվող գումար

30.1 Պայմանագրով կարող է նախատեսվել վնասների հատուցմանը Ապահովադրի անձնական մասնակցություն (չհատուցվող գումար): Այս դեպքում ապահովագրական հատուցումն իրականացվում է չհատուցվող գումարը գերազանող մասով: Չհատուցվող գումարը չգերազանցող վնասները հատուցման ենթակա չեն:

30.2 Եթե Պայմանագրով կամ ծրագրերով այլ բան նախատեսված չէ, ապա պայմանագիրը համարվում է կնքված պատասխանատվության սահմանաչափից 1% չհատուցվող գումարով գույքային վնասների համար, և առանց չհատուցվող գումարի մարմանական վնասների համար:

30.3 Չհատուցվող գումարը սահմանվում է յուրաքանչյուր ապահովագրական պատահարի համար: Եթե տեղի են ունենում մի քանի ապահովագրական պատահարներ, ապա չհատուցվող գումարը հանվում է դրանցից յուրաքանչյուրից:

31. Կողմերի իրավունքները և պարտականությունները

31.1 Ապահովադիրը պարտավոր է.

ա) ժամանակին վճարել ապահովագրավճարները

բ) Պայմանագրի կնքման ժամանակ Ապահովագրողին տեղեկացնել ռիսկի աստիճանի գնահատման համար էական ազդեցություն ունեցող և իրեն հայտնի հանգամանքների ինչպես նաև ապահովագրության տվյալ օբյեկտի վերաբերյալ կնքված կամ կնքվելիք պայմանագրերի մասին,

գ) ապահովագրական պատահարի տեղի ուենանալու ժամանակ

• ձեռնարկել անհրաժեշտ միջոցառումներ ապահովագրական պատահարի պատճառների, ընթացքի և հետևանքների բացահայտման համար

• անհապաղ, սակայն ամեն դեպքում ոչ ուշ քան 5 աշխատանքային օրվա ընթացքում Ապահովագրողին և լիազոր մարմինների կապի հնարավոր միջոցներով հայտնել պատահարի մասին

• Ապահովագրողին տեղեկացնել իրեն ապահովագրական պատահարի հետ կապված իրեն ներկայացված պահանջների մասին

• ձեռնարկել հնարավոր միջոցներ տուժած անձանց հասցված վնասները նվազեցնելու կամ կյանքը փրկելու համար

- Ապահովադրին հասանելի սահմաններում ապահովել Ապահովագրողի մասնակցությունը վնասված գույքի ուսումնասիրման և վնասի գնահատման աշխատանքներին
- Ապահովագրական պատահարի հետևանքով ներկայացված պահանջների դեպքում Ապահովագրողին ցուցաբերել դատական և արտադատական աջակցություն
- Ապահովագրողին ներկայացնել ապահովագրական պատահարի պատճառների, ընթացքի և հետևանքների, վնասի բնույթի և չափերի վերաբերյալ իրեն հայտնի տեղեկատվությունը և փաստաթղթերը
- Ապահովագրողի, ինչպես նաև Ապահովադրի ապահովագրական պատահարի հետ կապված շահերի պաշտպանության նպատակով նշանակել փաստաբան կամ այլ լիազոր անձ՝ եթե Ապահովագրողն անբաժեշտ կհամարի, ընդ որում այդպիսի շահերի պաշտպանության համար Ապահովագրողի կողմից նշված անձանց տալ լիազորագրեր կամ այլ անհրաժեշտ փաստաթղթեր: Ապահովագրողն իրավունք ունի, բայց պարտավոր չէ, դատանում ներկայացնել Ապահովադրի շահերը կամ այլ կերպ իրականացնել դրանց պաշտպանությունը՝ կապված ապահովագրական պատահարի հետ: Եթե Ապահովագրողը հրաժարվում է ներկայացնել Ապահովադրի շահերը դատարանում, ապա նա պարտավոր է հատուցել այդպիսի գործընթացների համար Ապահովադրի իրականացրած փաստաբանական ծախսերը: Այդպիսի ծախսերը հատուցվում են Պայմանագրով սահմանված Ապահովագրողի պատասխանատվության սահմաններում
- Առանց Ապահովագրողի համաձայնության չիրականացնել հատուցում, մասամբ կամ ամբողջությամբ չհամաձայնվել ներկայացված պահանջներին, ինչպես նաև չընդունել ներկայացված պահանջների կարգավորման հետ կապված որևէ ուղղակի կամ անուղղակի պարտավորություններ
- այն դեպքում, եթե իրականացվող հատուցման ընդհատման կամ ծավալների կրճատման հնարավորություն կրճատվի, ապա Ապահովադիրը պարտավոր է այդ մասին տեղեկացնել Ապահովագրողին և ձեռնարկել բոլոր հնարավոր միջոցները այդ հատուցումների ընդհատման կամ կրճատման համար:

31.2 Ապահովագրողը պարտավոր է.

- ա) Ապահովագրավճարի վճարման պահից 3 օրվա ընթացքում Ապահովադրին տրամադրել ապահովագրության վկայագիրը՝ կցելով սույն կանոնները
- բ) Ապահովադրի կողմից ապահովագրական պատահարի առաջացման ռիսկի և ապահովագրության օբյեկտի հնարավոր վնասի չափի նվազեցման նպատակով ձեռնարկված միջոցառումների, կամ ապահովագրության օբյեկտի իրական արժեքի մեծացման դեպքում՝ Ապահովադրի գրավոր դիմումի հիման վրա վերակնքել Պայմանագիրը՝ հաշվի առնելով այդ պարտավորությունները:
 - գ) ապահովագրական պատահարի դեպքում իրականացնել հատուցում
 - դ) հատուցել ապահովագրական պատահարի ժամանակ ապահովագրության օբյեկտին հասցված վնասների կրճատման կամ կանխարգելման նպատակով իրականացված ծախսերը
 - ե) չհրապարակել Ապահովադրի և նրա ուեցվածքի մասին տեղեկություններ՝ եթե դա հակասում է օրենսդրությանը

գ) ապահովագրական պատահարի տեղի ունենալու մասին տեղեկատվության ստանալու դեպքում

- հնարավորության դեպքում ուսումնասիրել պատահարի վայրը, կազմել վթարային հավաստագիր և Ապահովադրի ներակայացրած փաստաթղթերի հիման վրա որոշել վնասի չափը
- վթարային հավաստագրի և վնասի չափերի հաշվարկի հիման վրա իրականացնել հատուցում

31.3 Եթե Ապահովադիրը չկատարի Կանոնների 33.1 կետով սահմանված պարտականությունները, ապա Ապահովադրողն իրավունք ունի մերժել ապահովագրական հատուցումը այն չափով, որով դա նպաստել է ապահովագրական պատահարի առաջացմանը կամ ծավալների մեծացմանը:

32. Ապահովագրական հատուցման վճարման կարգը

32.1 Ապահովագրական հատուցումն իրականացվում է այն չափով, որով դա նախատեսվում է վնասների հատուցման վերաբերյալ ՀՀ օրենսդրությամբ:

32.2 Այն դեպքում, երբ ապահովագրական պատահարի վերաբերյալ վեճերը բացակայում են և տուժող կողմը իրավասու է ապահովագրական պատահարի հետևանքով հասցված վնասների սահմաններում հատուցում

ստանալու, ապա ներկայացված պահանջները բավարարում են և ապահովագրական հատուցումն իրականացվում է արտադատական եղանակով:

32.3 Այս դեպքում վնասի չափը և ապահովագրական հատուցման գումարը որոշվում է Ապահովագրողի կողմից՝ հասցված վնասի և դրա հետևանքների վերաբերյալ իրավասու մարմինների (բժշկական հաստատություններ, բժշկական փորձագիտական մարմիններ, սոցիալական ապահովության մարմիններ և այլն) կողմից տրված փաստաթղթերի, ինչպես նաև կատարված ծախսերը հավաստող վճարային հաշիվների, տեղեկանքների և այլ փաստաթղթերի հիման վրա: Անհրաժեշտության դեպքում ապահովագրական հատուցման գումարի հաշվարկման ժամանակ կարող է հրավիրվել նաև Ապահովադիրը: Անհրաժեշտության դեպքում վերոնշյալ փաստաթղթերի հիման վրա կազմվում է հատուցման վերաբերյալ համաձայնագիր, որը ստորագրվում է Ապահովագրողի, Ապահովադրի և տուժողի կողմից: Ապահովագրողն իրավասու է Կանոններով սահմանված ապահովագրական պատահարների հետևանքով հասցված փաստացի վնասների որոշման համար հրավիրել անկախ փորձագետներին:

32.4 Կանոնների 32.2 կետով թվարկված իրադարձությունների վերաբերյալ վեճերի առկայության դեպքում, ապահովագրական հատուցումն իրականացվում է դատարանի օրինական ուժի մեջ մտած դատավճռի կամ որոշման (արբիտրաժային դատարան) հիման վրա:

32.5 Ապահովագրական հատուցման վճարման համար Ապահովադիրը պետք է Ապահովագրողին ներկայացնի հետևյալ փաստաթղթերը՝

- փորձագիտական հանձնաժողովի կողմից կազմված ապահովագրական պատահարի արդյունքում երրորդ անձանց պատճառված վնասի պատահարների և հնարավոր հետևանքների մասին տեղեկատվություն պարունակող վթարային հավաստագիր
- Ապահովագրողին ներկայացված հայցերը՝ կապված տեղի ունեցած իրադարձության հետ
- դատական որոշումը, որը պարունակում է տեղի ունեցած ապահովագրական պատահարի հետևանքով հատուցման ենթակա գումարի չափը, որը ներառված է Ապահովագրողի պատասխանատվության ծավալի մեջ
- ապահովագրության վկայագիրը
- այլ առկա փաստաթղթեր, որոնք պարունակում են տվյալ ապահովագրական պատահարի մասին որոշում կայացնելու համար անհրաժեշտ տեղեկատվություն

32.6 Ապահովագրական հատուցման գումարի մեջ ներառվում են

32.6.1 Ֆիզիկական անձի առողջությանը վնաս հասցնելու կամ մահվան դեպքում

ա) ծախսեր, որոնք անհրաժեշտ են եղել փրկելու, էվակուացիայի, ստացիոնար պայմաններում հոսպիտալացման համար հիվանդանոց տեղափոխելու ծախսեր, վիրաբուժության, ախտորոշման, դեղաբուժության, ինչպես նաև դրանց ամբուլատոր պայմաններում տրամադրման ծախսերը, ընդ որում հիվանդասենյակում և վերակենդանացման բաժանմունքում գտնվելու ծախսերը ենթակա է հատուցման օրեկան առավելագույնը 500 (հինգ հարյուր) պ/մ չափով, առավելագույնը 10 (տաս) օրվա համար:

բ) հուղարկավորության ծախսեր

գ) հանգամանքների նախնական բացահայտման և Ապահովադրի մեղավորության աստիճանի պարզման հետ կապված խելամիտ ծախսեր

դ) դատական մարմիններում ենթադրյալ ապահովագրական պատահարի հետ կապված գործի վարման ծախսերը

ե) անհրաժեշտ և խելամիտ ծախսեր՝ կապված ապահովագրական պատահարի հետևանքով տուժած անձանց կյանքի կամ գույքի փրկման կամ ապահովագրական պատահարի հետևանքով պատճառված վնասի նվազեցման հետ:

32.6.2. Ֆիզիկական կամ իրավաբանական անձանց գույքային վնասի հասցման դեպքում

ա) ուղղակի իրական վնասը, հասցված գույքի ամբողջական ոչնչացման կամ մասնակի վնասման հետևանքով, որը գույքի ամբողջական կորստի դեպքում որոշվում է նրա իրական արժեքի չափով՝ մասհանելով մաշվածությունը, մասնակի վնասվածքի դեպքում՝ անհրաժեշտ ծախսերի ծավալով, որն անհրաժեշտ է բերելու այն վիճակին, որում գույքը գտնվել է մինչև ապահովագրական պատահարը

բ) պատահարի հանգամանքների և ապահովագրի մեղավորության աստիճանի նախնական պարզաբանման նպատակով իրականացված խելամիտ ծախսերը, եթե տվյալ իրադարձությունը ճանաչվել է որպես ապահովագրական պատահար

գ) դատական մարմիններում ենթադրյալ ապահովագրական պատահարի գործի ընթացքի հետ կապված ծախսերը, եթե տվյալ իրադարձությունը ճանաչվել է ապահովագրական պատահար

դ) ապահովագրական պատահարի հետևանքով տուժած անձանց կյանքի և գույքի փրկման կամ հասցված վնասների նվազեցման հետ կապված խելամիտ և անհրաժեշտ ծախսերը,

32.7 Ապահովագրական հատուցումը վճարվում է Ապահովագրողի կողմից ապահովագրական պատահարի հետ կապված բոլոր անհրաժեշտ փաստաթղթերի ստանալուց և շահագրգիռ բոլոր անձանց հետ նրա վերջնական չափի համաձայնեցումից կամ դատավճռի կամ դատարանի որոշման (արբիտրաժային դատարան) օրինական ուժի մեջ մտնելուց հետո 20 օրվա ընթացքում:

32.8 Ապահովագրողն իրավունք ունի մերժել Ապահովագրի նպահովագրական հատուցում վճարել, եթե պայմանագրի գործողության ընթացքում տեղի են ունեցել.

- Ապահովագրի, Ապահովագրված անձի կամ տուժած երրորդ անձի կողմից նպատակամղված գործողություններ, որոնք նպաստել են ապահովագրական պատահարի տեղի ունենալուն
- Ապահովագրի կամ այն անձի կողմից ում օգտին կնքվել է ապահովագրության պայմանագիրը, միտումնավոր հանցագործություն, որն անմիջական կապի մեջ է ապահովագրական պատահարի հետ
- Ապահովագրի կողմից Ապահովագրողին ապահովագրության օբյեկտի, ապահովագրական ռիսկի փոփոխությունների և վնասի ծավալի մասին սխալ տեղեկատվության հաղորդում
- Ապահովագրողին ապահովագրական պատահարի մասին հայտնելու ժամկետների խախտում կամ պատճառված վնասի փաստը և չափերը հաստատող փաստաթղթերի չներկայացում
- վնասներն առաջացել են Ապահովագրի նպատակամղված և նրա համար հասանելի միջոցների չկիրառման պատճառով, որոնք պետք է ուղղված լինեն հասցված վնասի նվազեցմանը:

32.9 Ապահովագրական հատուցման մերժման մասին որոշումը Ապահովագրի հաղորդում է գրավոր տեսքով մերժման պատճառների հիմնավորմամբ:

32.10 Ապահովագրողի ապահովագրական հատուցման մերժման որոշումը կարող է Ապահովագրի կողմից վիճարկվել դատարանում:

V. ԲԱԺԻՆ. ՈՒՂԵՎՈՐՈՒԹՅԱՆ ԸՆԴՀԱՏՈՒՄԻՑ ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐ

33. ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅԱՆ ՕԲՅԵԿՏ

33.1 Մույն ապահովագրության շրջանակներում ապահովագրության օբյեկտ են հանդիսանում Ապահովագրի (Ապահովագրված անձի) գույքային շահերը՝ կապված Ապահովագրի (Ապահովագրված անձին) և (կամ) վերջինիս ընտանիքի անդամին առնչվող՝ Կանոնների 36.1 կետում նշված իրադարձություններով պայմանավորված ուղևորության չեղարկման, ժամկետների փոփոխման կամ ուղևորության ընդհատման հետևանքով առաջացած ծախսերի հետ:

34. ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ՊԱՏԱՀԱՐՆԵՐ (ՌԻՄԿԵՐ)

34.1 Համաձայն Կանոնների՝ Ապահովագրական պատահար է համարվում ուղևորության չեղարկման, ժամկետների փոփոխման կամ ուղևորության ընդհատման հետ կապված ծախսերի առաջացումը, որը հետևանք է հետևյալ իրադարձությունների ի հայտ գալու՝

34.1.1 Ապահովագրված անձի և (կամ) նրա ընտանիքի անդամի (կին (ամուսին), զավակ (որդեգրած զավակ) ստացիոնար բուժման անհրաժեշտության (հոսպիտալացման) և մահվան,

34.1.2 Ապահովագրված անձին պատկանող անշարժ գույքի և (կամ) տրանսպորտային միջոցի վնասման (ոչնչացման) կամ կորստի, որը տեղի է ունեցել՝

34.1.2.1 հրդեհի հետևանքով,

34.1.2.2 ջրամատակարարման, կոյուղու, ջեռուցման համակարգերի ջրերի արտահոսքի հետևանքով,

34.1.2.3 տարերային աղետների (երկրաշարժ, սողանք, կարկուտ, ջրհեղեղ կամ տեղատարափ անձրև, փոթորիկ կամ ուժեղ քամի) հետևանքով:

35. ՈՒՂԵՎՈՐՈՒԹՅԱՆ ԸՆԴՀԱՏՈՒՄԻՑ ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ԲԱՑԱՌՈՒԹՅՈՒՆՆԵՐ

35.1 Սույն ապահովագրության շրջանակներում հատուցման ենթակա չեն ծախսերը, որոնք ուղղակի կամ անուղղակի կերպով հետևանք են՝

35.1.1 Ապահովագրված անձի, նրա ընտանիքի անդամի ալկոհոլի, թմրանյութերի, թունավոր, հոգեմետ նյութերի օգտագործման,

35.1.2 Ապահովագրված անձի, նրա ընտանիքի անդամի ինքնասպանության կամ ինքնասպանության փորձի,

35.1.3 Ապահովագրված անձի կամ նրա ընտանիքի անդամի կողմից դիտավորյալ կանխատեսված կամ հակաօրինական գործողությունների,

35.1.4. Ապահովագրված անձի կամ նրա ընտանիքի անդամի կողմից Ուղևորության ընթացքում դեղամիջոցների օգտագործումը չարաշահելու, Բժշկի կողմից նշանակված բուժումը չպահպանելու, բացառությամբ, եթե Ապահովագրված անձը կամ նրա ընտանիքի անդամը ապացուցում է, որ բուժումը չպահպանելը եղել է իրենից անկախ հանգամանքներով պայմանավորված,

35.1.5 Ապահովագրված անձի կամ նրա ընտանիքի անդամի հոգեկան հիվանդությունների և շեղումների,

35.1.6 Ապահովագրված անձի կամ նրա ընտանիքի անդամի կողմից սպորտային պարապմունքների, մրցումների մասնակցելու, առանց շարժիչի թռչող սարքերով, ճախրասավառնակով (планер), պարաշյուտով թռիչքի, ցանկացած տեսակի սպորտով կամ այլ վտանգավոր գործողություններով զբաղվելու,

35.1.7 հղիության կամ դրա հետ կապված առողջական ցանկացած խնդրի,

35.1.8 ատամնաբուժական խնդիրների,

35.1.9 Ապահովագրված անձի ճանապարհորդական փաստաթղթերի սխալ գրանցման, գողության կամ կորուսի:

35.2 Ապահովագրողը հատուցում չի իրականացնում այն պատահարների համար, որոնք ուղղակի կամ անուղղակի կերպով հետևանք են՝

35.2.1 Ապահովագրված անձի կամ նրա ընտանիքի անդամի կողմից հակաօրինական գործողությունների

35.2.2 միջուկային պայթյունի, ճառագայթման ազդեցության, ռադիոակտիվ կամ այլ տեսակի վարակի,

35.2.3 տարերային աղետների և դրանց հետևանքների, համաճարակների, կարանտինի, օդերևութաբանական պայմանների, բառացությամբ Պայմանների 4.1.2.4 ենթակետով սահմանված դեպքի,

35.2.4 պատերազմների, զորաշարժերի կամ ռազմական այլ գործողությունների, քաղաքական հուզումների, ահաբեկչական գործողությունների, զանգվածային ակցիաների, գործադուլների:

35.3 Ապահովագրողը պատասխանատվություն չի կրում հյուպատոսարանների, տուրիստական ընկերությունների, տրանսպորտային կազմակերպությունների, Ապահովագրված անձի և ուղևորության կազմակերպման և անցկացման հետ առնչություն ունեցող այլ իրավաբանական և ֆիզիկական անձանց կատարած սխալների, ինչպես նաև վիզայի մերժման համար:

36. ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ԳՈՒՄԱՐ, ՉՀԱՏՈՒՑՎՈՂ ԳՈՒՄԱՐ

36.1. Ապահովագրական գումարը սահմանվում է առավելագույնը ավիատոմսի չվերադարձվող արժեքի և (կամ) կացարանի ամրագրման չվերադարձվող արժեքի չափով՝ Պայմանագրի գործողության ողջ ժամկետի համար:

36.2 Պայմանագրով Ապահովադրի (Ապահովագրված անձի) ցանկությանը կարող է սահմանվել չհատուցվող գումար:

37. ՊԱՅՄԱՆԱԳԻՐ, ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿՆՔՄԱՆ ԿԱՐԳ, ԺԱՄԿԵՏՆԵՐ

37.1 Պայմանագիրն Ապահովագրողի և Ապահովադրի միջև կնքված փաստաթուղթ է, ըստ որի Ապահովագրողն Ապահովագրավճարի դիմաց պարտավորվում է Պայմանագրով և սույն Պայմաններով սահմանված կարգով Ապահովադրին (Ապահովագրված անձին) տրամադրել ապահովագրական հատուցում:

37.2. Պայմանագիրը կնքվում է գրավոր՝ Ապահովադրի կողմից բանավոր կամ գրավոր դիմումի հիման վրա:

37.3. Պայմանագիրը կնքելու համար Ապահովագրողն իրավունք ունի Ապահովադրից պահանջել.

37.3.1. ֆիզիկական անձի դեպքում՝ անձը հաստատող փաստաթղթի բնօրինակը կամ պատշաճ վավերացված պատճենը, իրավաբանական անձի դեպքում՝ պետական գրանցման վկայականի և դրա ներդիրների բնօրինակները կամ պատշաճ վավերացված պատճենները,

37.3.2. Ապահովագրված անձի անձը հաստատող փաստաթղթի բնօրինակը կամ պատշաճ վավերացված պատճենը,

37.3.3. ուղևորության վերաբերյալ տեղեկատվությունը, մասնավորապես՝ ավիատոմսի բնօրինակը կամ պատճենը, կացարանի ամրագրումը, ավիատոմսը և (կամ) կացարանի ամրագրումը չեղարկելու դեպքում չվերադարձվող գումարի չափը հավաստող փաստաթուղթը,

37.3.4. իրեն տրամադրել գրավոր տեղեկություն, որն ուղղակի կամ անուղղակի կարող է որոշակի ազդեցություն ունենալ Ապահովագրողի կողմից Ապահովագրական պատահարի տեղի ունենալու հավանականության և դրա հետևանքով հնարավոր վնասների չափերի կանխորոշման վրա,

37.3.5. այլ փաստաթղթեր և տեղեկություններ, որոնք անհրաժեշտ են ապահովագրական ռիսկի ճշգրիտ գնահատման, ինչպես նաև Պայմանագրի կնքման համար:

37.4. Պայմանագիրը կնքվում է ավիատոմսի գնման և (կամ) կացարանի ամրագրման օրը, որը չի կարող լինել ավելի ուշ, քան նախատեսվող թռիչքից 1 (մեկ) շաբաթ առաջ:

37.5. Ուղևորության յուրաքանչյուր թռիչքի (ուղղության) համար կնքվում է 1 (մեկ) ապահովագրության պայմանագիր:

37.6. Պայմանագրի գործողության ժամկետը սկսվում է ավիատոմսի գնման և (կամ) կացարանի ամրագրման օրերից ամենաուշին հաջորդող օրվա ժամը 00:00-ից և ավարտվում մինչև յուրաքանչյուր թռիչքի (ընդհատումներով թռիչքի դեպքում՝ դրա վերջին մասի) մեկնման ժամը, և չի կարող գերազանցել 365 օրը:

38. ԿՈՂՄԵՐԻ ՓՈՆԶԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐՆ ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ՊԱՏԱՀԱՐԻ ԴԵՊՔՈՒՄ

38.1. Ապահովագրական պատահար տեղի ունենալու դեպքում Ապահովադիրը և (կամ) Ապահովագրված անձը պարտավոր են.

38.1.1. պատահարի մասին անհապաղ (ԱՌԱՋԻՆ ԻՄԿ ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅԱՆ ԴԵՊՔՈՒՄ) Պայմանագրում նշված հեռախոսահամարով տեղյակ պահել Ապահովագրողին, իսկ պատահարը տեղի ունենալուց հետո (պատահարը Հայաստանի Հանրապետության տարածքից դուրս տեղի ունենալու դեպքում՝ Հայաստանի Հանրապետություն վերադառնալուց հետո) ՈՉ ՈՒՇ, ՔԱՆ 10 ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՕՐՎԱ ԸՆԹԱՅՔՈՒՄ այդ մասին գրավոր տեղեկացնել Ապահովագրողին: Սույն ենթակետի առաջին մասով նախատեսված պարտականությունը չկատարելու դեպքում Ապահովագրողն ԻՐԱՎՈՒՆՔ ՈՒՆԻ ՉՎՃԱՐԵԼՈՒ ապահովագրական հատուցում, եթե չկապացուցվի, որ նա ժամանակին իմացել է Ապահովագրական պատահարի վրա հասնելու մասին կամ, որ այդ մասին Ապահովագրողի մոտ տեղեկությունների բացակայությունը չէր կարող ազդել ապահովագրական հատուցում վճարելու նրա պարտականության վրա: Սահմանված ժամկետում Ապահովագրողին ԳՐԱՎՈՐ ՉՏԵՂԵԿԱՑՆԵԼՈՒ ԴԵՊՔՈՒՄ Ապահովագրողն ԻՐԱՎՈՒՆՔ ՈՒՆԻ ՉՎՃԱՐԵԼ ապահովագրական հատուցում՝

բացառությամբ այն դեպքի, երբ Ապահովադիրը կամ Ապահովագրված անձը ապացուցում են տեղեկացնելու անհնարինությունը: Պայմանների սույն կետը չկատարելու դեպքում Ապահովագրողն իրավունք ունի չվճարել ապահովագրական հատուցում:

38.1.2. Պատահարի մասին ԱՆՀԱՊԱՂ (ԱՌԱՋԻՆ ԻՍԿ ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅԱՆ ԴԵՊՔՈՒՄ) հայտնել տուրիստական կազմակերպությանը, ավիաընկերությանը, իսկ կացարանը ինքնուրույն ամրագրելու դեպքում՝ կացարանի կոնտակտային անձին,

38.1.3. ՕԳՏԱԳՈՐԾԵԼ ԲՈԼՈՐ ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ (ամրագրման չեղարկման ժամկետների պահպանում և այլն) ավիատոմսի և (կամ) կացարանի ամրագրման չեղարկման հետ կապված ծախսերը նվազագույնի հասցնելու համար,

38.1.4. Պատահարի մասին ԱՆՀԱՊԱՂ (ԱՌԱՋԻՆ ԻՍԿ ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅԱՆ ԴԵՊՔՈՒՄ) հայտնել համապատասխան իրավասու մարմիններին և ստանալ Պատահարը տեղի ունենալու հանգամանքը հավաստող պատշաճ վավերացված և Պատահարի հետ կապված այլ փաստաթղթեր,

38.1.5. Ապահովագրական պատահարի առաջացման համար երրորդ կողմից պատճառված ՎՆԱՄԻ (մի մասը կամ ամբողջությամբ) ՀԱՏՈՒՑՄԱՆ ԴԵՊՔՈՒՄ ԱՆՄԻՋԱՊԵՍ ՏԵՂԵԿԱՑՆԵԼ Ապահովագրողին, որի դեպքում Ապահովագրողին է վերադարձվում համապատասխան չափով վճարված ապահովագրական հատուցումը, իսկ հատուցումը վճարված չլինելու դեպքում այդքան մասով վճարում չի կատարվում,

38.1.6. Ապահովագրական պատահարի հետ կապված գործընթացներում այլ կողմերի հետ հարաբերություններում ԱՊԱՀՈՎԵԼ ԻՐ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ և ՇԱՀԵՐԻ ՊԱՏՇԱԿ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆԸ:

38.2 Ապահովագրական պատահար տեղի ունենալու դեպքում Ապահովագրողը պարտավոր է.

38.2.1. տրամադրել խորհրդատվություն Ապահովադրի (Ապահովագրված անձի) հետագա իրականացվելիք գործողությունների վերաբերյալ,

38.2.2 Ապահովադրից և (կամ) Ապահովագրված անձից ապահովագրական հատուցման դիմում ստանալուց հետո վերջինիս տեղեկացնել բացակայող և ապահովագրական պահանջի կարգավորման համար անհրաժեշտ փաստաթղթերի մասին,

38.2.3 իրականացնել ապահովագրական հատուցում Պայմաններով սահմանված կարգով և ժամկետում:

39. ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ՊԱՀԱՆՋԻ ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑ

39.1 Ապահովագրական հատուցում ստանալու համար Ապահովագրողին պետք է ներկայացվեն հետևյալ փաստաթղթերը՝

39.1.1 Ապահովադրի և (կամ) Ապահովագրված անձի կողմից դիմում՝ հատուցում ստանալու վերաբերյալ,

39.1.2. Պայմանագրի բնօրինակը (Ապահովագրողի պահանջով),

39.1.3. Ապահովադրի և (կամ) Ապահովագրված անձի անձը հաստատող փաստաթուղթը,

39.1.4. Ապահովագրական պատահարը հիմնավորող իրավասու մարմինների կողմից տրված և պատշաճ հաստատված փաստաթղթերը, մասնավորապես՝

39.1.4.1. տուրիստական ընկերության հետ կնքված Պայմանագրի բնօրինակը,

39.1.4.2. տուրիստական Ընկերության ծառայությունների դիմաց կատարված վճարումները հաստատող փաստաթուղթ,

39.1.4.3. ավիատոմսի և (կամ) կացարանի համար կատարված վճարումները և (կամ) ամրագրումը հաստատող փաստաթուղթ,

39.1.4.4. տուրիստական ընկերության կողմից տրվող պայմանները ներառող փաստաթուղթ, այդ թվում՝ ավիատոմսի և (կամ) կացարանի ամրագրման արժեքը գնման/ամրագրման օրվա դրությամբ ՀՀ դրամով, չեղարկման դեպքում վերադարձվող և չվերադարձվող գումարների չափը,

39.1.4.5. չօտագործված ավիատոմսը և (կամ) կացարանի ամրագրման փաստաթուղթը,

39.1.5. Ապահովագրական պատահարի հանգեցրած իրադարձությունները հիմնավորող իրավասու մարմինների կողմից տրված և պատշաճ հաստատված համապատասխան փաստաթղթերը, մասնավորապես՝

39.1.5.1. Ապահովագրված անձի կամ նրա ընտանիքի անդամի առողջական խնդիրների կամ մահվան դեպքում՝

➤ Էպիկրիզը և (կամ) Ապահովագրված անձի կամ նրա ընտանիքի անդամի հոսպիտալացումը հաստատող փաստաթուղթը և (կամ) մահվան վկայականը,

➤ Ապահովագրված անձին և նրա ընտանիքի անդամի ազգակցական կապը հաստատող փաստաթուղթը,

39.1.5.2. Ապահովագրված անձին պատկանող գույքի վնասման կամ կորստի դեպքում՝

➤ գույքի նկատմամբ սեփականության իրավունքը հավաստող փաստաթուղթ,

➤ գույքի վնասման կամ կորստի (ոչնչացման) վերաբերյալ համապատասխան իրավասու մարմնի կողմից տրված անհրաժեշտ փաստաթղթերը, լուսանկարներ՝ բացառությամբ այն դեպքի, երբ Ապահովագրողն անձամբ հնարավորություն ունի պարզելու պատահարի տեղի ունենալու հանգամանքները և Ապահովադրին (Ապահովագրված անձին) ազատել է նշված պարտականությունից,

➤ դեպքի պահին Ապահովագրված անձի կամ ընտանիքի անդամի կողմից (եթե վերջինս հանդիսացել է Ապահովագրված անձին պատկանող տրանսպորտային միջոցի վարորդ) ալկոհոլի, թմրադեղերի, տոքսիկ նյութերի կամ հոգեմետ դեղերի օգտագործման հանգամանքը հաստատող կամ հերքող համապատասխան լիազորված մարմնի կողմից տրված փաստաթուղթ՝ բացառությամբ այն դեպքերի, երբ Ապահովագրողի ներկայացուցիչը պարզել է տվյալ անձի կողմից ալկոհոլի, թմրադեղերի, տոքսիկ նյութերի կամ հոգեմետ դեղերի օգտագործման հանգամանքը կամ ազատել է տվյալ անձին սույն ենթակետում նշված պարտականությունը կատարելուց՝ վերջինիս տրամադրելով համապատասխան փաստաթուղթ,

39.1.5.3. Դատական գործընթացում ներգրավվածության դեպքում՝

➤ դատարանի կողմից տրված համապատասխան ծանուցում,

39.1.5.4. Ձինված ուժեր գորակոչվելու (գորավարժությունների մասնակցելու) դեպքում՝

➤ իրավասու մարմնի կողմից տրված համապատասխան ծանուցում:

39.1.6. Ապահովագրողի պահանջով՝ Ապահովագրական պատահարի հանգամանքները պարզաբանող և (կամ) Ապահովագրական հատուցման վերաբերյալ որոշման կայացման համար անհրաժեշտ այլ փաստաթղթեր, տեղեկատվություն:

39.2. Ապահովադիրը (Ապահովագրված անձը) ՊԱՏՍԱՎՈՐ Է ապահովագրական հատուցման համար պահանջվող բոլոր փաստաթղթերը (բացառությամբ գրավոր դիմումի) ներկայացնել Ապահովագրական պատահարի վերաբերյալ Ապահովագրողին ԳՐԱՎՈՐ ԴԻՄՈՒՄ ՆԵՐԿԱՅԱՑՆԵԼՈՒ ՕՐՎԱՆԻՑ ՀԵՏՈՅ ԱՄՍՎԱ ԸՆԹԱՑՔՈՒՄ: Պայմանների սույն կետը չկատարելու դեպքում Ապահովագրողն ԻՐԱՎՈՒՆՔ ՈՒՆԻ ՉՎՃԱՐԵԼ ապահովագրական հատուցում:

39.3. Ապահովագրողն Ապահովագրական պատահարին առնչվող և Կանոններով սահմանված բոլոր անհրաժեշտ փաստաթղթերը ստանալուց հետո 15 աշխատանքային օրվա ընթացքում կայացնում է ապահովագրական հատուցում տրամադրելու կամ մերժելու վերաբերյալ որոշում:

39.4. Ապահովագրողն Ապահովադրի (Ապահովագրված անձի) պահանջով ապահովագրական հատուցում տրամադրելու վերաբերյալ եզրակացությունը (որոշումը) հաստատելուց հետո առավելագույնը 3 (երեք) աշխատանքային օրվա ընթացքում այն առձեռն կամ փոստային ծառայության միջոցով տրամադրում է Ապահովադրին (Ապահովագրված անձին):

39.5 Ապահովագրական հատուցման մերժման դեպքում Ապահովագրողը կայացնում է պատճառաբանված որոշում, որը 5 օրվա ընթացքում պատվիրված նամակով ուղարկում է Ապահովադրին (Ապահովագրված անձին)՝ նրա մշտական բնակության կամ գործունեության հասցեով:

39.6 Ապահովադիրը պատահարի հետ կապված յուրաքանչյուր նամակի, պահանջի, հայցի, դատաքննության, հետաքննության կամ ցանկացած այլ գործընթացի վերաբերյալ տեղեկությունները կամ փաստաթղթերը պետք է անմիջապես ներկայացնի Ապահովագրողին:

39.7 Ապահովագրողն ԻՐԱՎՈՒՆՔ ՈՒՆԻ ՄԵՐԺԵԼ ապահովագրական հատուցումը կամ հետ պահանջել այն, եթե պարզվի, որ Պայմանագրի գործողության ընթացքում Ապահովադրի կողմից Ապահովագրողին ՏՐԱՄԱԴՐՎԵԼ ԵՆ ապահովագրական ՌԻՍԿԻ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՎՐԱ ԱԶԴՈՂ կեղծ տեղեկություններ կամ այն

դեպքերում, երբ Ապահովագրված անձի և (կամ) Ապահովադրի կողմից ԻՐԱԿԱՆԱՑՎԵԼ ԵՆ ՄԻՏՈՒՄՆԱՎՈՐ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ, որոնք ուղղված են եղել կամ նպաստել են Ապահովագրական պատահարի տեղի ունենալուն:

VI. ԲԱԺԻՆ. ԹՌԻԶՔԻ ՀԵՏԱԶԳՄԱՆ ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐ

40. ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅԱՆ ՕԲՅԵԿՏ

40.1 Սույն ապահովագրության շրջանակներում ապահովագրության օբյեկտ են հանդիսանում Ապահովադրի (Ապահովագրված անձի) գույքային շահերը՝ կապված Ապահովադրի (Ապահովագրված անձի) թոխչքի հետաձգման հետևանքով առաջացած ծախսերի հետ:

41. ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ՊԱՏԱՀԱՐՆԵՐ (ՌԻՄԿԵՐ)

41.1. Համաձայն Կանոնների՝ Ապահովագրական պատահար է համարվում Ապահովադրի (Ապահովագրված անձի) միջազգային կամ ներքին թոխչքի հետաձգման հետ կապված չնախատեսված լրացուցիչ ծախսերի առաջացումը:

42. ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅԱՆ ՏԱՐԱԾՔԸ ԵՎ ԺԱՄԿԵՏԸ

Ապահովագրության տարածք է համարվում Պայմանագրում նշված ավիաթոխչքների երթուղու տարածքը, ներառյալ մինչև վերջնական նշանակետ հասնելու համար մեկնման և ժամանման տարածքները:

Ապահովագրության ժամկետը սկսվում է ավիատոմսում նշված առաջին թոխչքի ամսաթվից և ժամից, և ավարտվում է Ապահովագրված անձի վերջնական նշանակետ հասնելու պահը, բայց ոչ ուշ, քան Պայմանագրում, որպես ավարտ նշված ամսաթվի 24:00 ժամը:

Ապահովագրական պատահարի ժամանակ 1 ժամ ուշացման համար Ապահովագրողի կողմից ենթակա է հատուցման առավելագույնը 75 (յոթանասունհինգ) պ/մ չափով, իսկ ապահովագրական պատահար է համարվում թոխչքի 4-12 ժամ ուշացումը:

43. ԱՊԱՀՈՎԱԴՐԻ (ԱՊԱՀՈՎԱԳՐՎԱԾ ԱՆՁԻ) ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐՆ ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ՊԱՏԱՀԱՐԻ ԴԵՊՔՈՒՄ

43.1 Ապահովագրական պատահար տեղի ունենալու դեպքում Ապահովադիրը (Ապահովագրված անձը) պարտավոր է.

43.1.1 պատահարի մասին անհապաղ (ԱՌԱՋԻՆ ԻՄԿ ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅԱՆ ԴԵՊՔՈՒՄ) Պայմանագրում նշված հեռախոսահամարով տեղյակ պահել Ապահովագրողին, իսկ պատահարը տեղի ունենալուց հետո (պատահարը Հայաստանի Հանրապետության տարածքից դուրս տեղի ունենալու դեպքում՝ Հայաստանի Հանրապետություն վերադառնալուց հետո) ՈՉ ՌԻՇ, ՔԱՆ 10 ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՕՐՎԱ ԸՆԹԱՑՔՈՒՄ այդ մասին գրավոր տեղեկացնել Ապահովագրողին: Սույն ենթակետի առաջին մասով նախատեսված պարտականությունը չկատարելու դեպքում Ապահովագրողն ԻՐԱՎՈՒՆՔ ՈՒՆԻ ԶՎՃԱՐԵԼՈՒ ապահովագրական հատուցում, եթե չկապացուցվի, որ նա ժամանակին իմացել է Ապահովագրական պատահարի վրա հասնելու մասին կամ, որ այդ մասին Ապահովագրողի մոտ տեղեկությունների բացակայությունը չէր կարող ազդել ապահովագրական հատուցում վճարելու նրա պարտականության վրա: Սահմանված ժամկետում Ապահովագրողին ԳՐԱՎՈՐ ԶՏԵՂԵԿԱՑՆԵԼՈՒ ԴԵՊՔՈՒՄ Ապահովագրողն ԻՐԱՎՈՒՆՔ ՈՒՆԻ ԶՎՃԱՐԵԼ ապահովագրական հատուցում՝ բացառությամբ այն դեպքի, երբ Ապահովադիրը կամ Ապահովագրված անձը ապացուցում են տեղեկացնելու անհնարինությունը: Պայմանների սույն կետը չկատարելու դեպքում Ապահովագրողն իրավունք ունի չվճարել ապահովագրական հատուցում:

43.1.2 Ապահովագրական պատահար տեղի ունենալու դեպքում Ապահովադիրը (Ապահովագրված անձը) օդանավակայանում պետք պահանջի ավիաընկերության կողմից հավաստում թռիչքի հետաձգման մասին՝ թռիչքի փաստացի իրականացման ժամի նշմամբ (կամ ճանապարհորդությունից ետ վերադառնալուց հետո պահանջել ավիաընկերությունից նշված տեղեկություններով տեղեկանք): Ապահովադիրը (Ապահովագրված անձը) պարտավոր է նաև պահպանել նստեցման քարտը, տոմսերը և կատարված ծախսերը հավաստող կտրոնները՝ ապահովագրական պատահարի մասին գրավոր հայտնելու ժամանակ դրանք Ապահովագրողին ներկայացնելու համար:

VII. ԲԱԺԻՆ. ՖՈՐՄ-ՄԱԺՈՐ (ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺ)

44.1 Կողմերն ազատվում են Կանոններով և Պայմանագրով սահմանված պարտականությունների կատարումից, եթե պատահարը հետևանք է անհաղթահարելի ուժի, մասնավորապես՝ գործադուլի, ներխուժման, ռազմական գործողությունների (անկախ պատերազմ հայտարարելու հանգամանքից), քաղաքացիական պատերազմի, ապստամբության, խռովության, ահաբեկչության, իշխանության ուզուրպացման, ռազմական հեղաշրջման, ցանկացած տեսակի տրանսպորտային աղետների (բացառությամբ մարդատար տրանսպորտային միջոցների հետ կապված աղետների), ռադիոակտիվ վարակման, երկրաշարժի, ջրհեղեղի և այլ բնական աղետների կամ ցանկացած այլ ֆորս-մաժորային հանգամանքների:

VIII. ԲԱԺԻՆ. ՀԱՏՈՒՑՄԱՆ ՀԵՏ ՊԱՀԱՆՁԻ ԻՐԱՎՈՒՆՔ (ՍՈՒԲՐՈԳԱՑԻՄ)

45.1 Ապահովագրական պատահարի տեղի ունենալու արդյունքում Ապահովադիրն (Ապահովագրված անձին) պատճառված վնասից բխող նրա պահանջի իրավունքը վնասը պատճառած անձի նկատմամբ անցնում է Ապահովագրողին՝ նրա կողմից հատուցված գումարի մասով, եթե այլ բան նախատեսված չէ Պայմանագրով: Դիտավորյալ վնաս պատճառած անձի նկատմամբ պահանջի իրավունքն Ապահովագրողին անցնելը բացառող Պայմանագրի պայմանն առոչինչ է:

45.2 Ապահովադիրը (Ապահովագրված անձը) ՊԱՐՏԱՎՈՐ Է Ապահովագրողին փոխանցել բոլոր փաստաթղթերը և ապացույցները, ինչպես նաև տրամադրել իրեն հայտնի բոլոր տվյալները, որոնք անհրաժեշտ են Ապահովագրողին սուբրոգացիա իրականացնելու համար:

45.3 Եթե Ապահովադիրը (Ապահովագրված անձը) հրաժարվել է Ապահովագրողի կողմից հատուցված կամ հատուցվելիք վնասների համար պատասխանատու անձի նկատմամբ ՊԱՀԱՆՁԻ ԻՐ ԻՐԱՎՈՒՆՔԻՑ կամ այդ իրավունքի իրականացումն ԱՆՀՆԱՐԻՆ Է ԴԱՐՁԵԼ Ապահովադրի (Ապահովագրված անձի) մեղքով, ապա Ապահովագրողը լրիվ կամ համապատասխան չափով ԱԶՍՎՈՒՄ Է ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ՀԱՏՈՒՑՈՒՄ ՎՃԱՐԵԼՈՒ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆԻՑ, իսկ ապահովագրական հատուցումն արդեն վճարված լինելու դեպքում՝ Ապահովագրողն իրավունք ունի պահանջել Ապահովադրից (Ապահովագրված անձից) վերադարձնել ավելորդ վճարված ապահովագրական հատուցման գումարը:

IX. ԲԱԺԻՆ. ՎԵՃԵՐԻ ԼՈՒԾՄԱՆ ԿԱՐԳ

46.1 Պայմանագրի գործողության ընթացքում առաջացող բոլոր վեճերը լուծվում են Պայմանագրի կողմերի միջև անմիջական բանակցությունների միջոցով: Բանակցությունների միջոցով համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը կարող են լուծվել ՀՀ-ում գործող Ֆինանսական համակարգի հաշտարարին դիմելու միջոցով կամ դատական կարգով՝ ՀՀ օրենսդրությանը համաձայն:

46.2 Վեճերի առաջացման դեպքում Կանոններով չկարգավորված հարցերը կարգավորվում են ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

X. ԲԱԺԻՆ. ԱՅԼ ԴՐՈՒՑԹՆԵՐ

47.1 Կանոններ և նրա թարգմանությունների տարընթերցման դեպքում նախապատվությունը տրվում է հայերեն տարբերակին:

47.2 Պայմանական միավոր (պ/մ) – Շենգենյան տարածքում ներառված երկրներում տեղի ունեցած պատահարի համար ապահովագրական հատուցման վճարման միջոց է համարվում Եվրոյին համարժեք ՀՀ դրամը, իսկ Շենգենյան տարածքից դուրս գտնվող երկրների համար, անկախ սվյալ երկրի ազգային արժույթից՝ ԱՄՆ դոլարին համարժեք ՀՀ դրամը: